

P. 51

2004.

41

A 257

2000

Հայ

21

ՆՈՐ ՄԱՏԵԿԱՆԴԱՐԱՆ

Ը.

Թ 257

Զ Բ Ա Մ Պ Օ Լ Ի

ԳԻՒՂԱԿԱՆ

ՎԱՐԺՈՒՔ

(ԽՏԱԿԱՆ ԲԱՐՁԵՐԻՑ)

Թարգմ. լիւոն Մելիք - Ադամեանց



7153

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ճպարան Մ. Յարաձեկի, Նիկոլ. փ. ո. 21


1897



Дозволено цензурою Тифлисъ, 24-го Февраля  
1897 г.

28-42

41-96



Արևափելի անձրև էր գալիս, երբ օ-  
քիորդը գրաստավար Ռեկիամօցցակի ջորիով մի  
կերպ գիւղ հասաւ: Սելաւը նրան այնպէս  
էր թրջել, որ ջրից նոր հանած խեղդուածի էր  
նմանում: Օրիորդը պարտաւորուած էր ան-  
պատճառ իւր պաշտօնատեղում լինել նոյեմբե-  
րի երկուսին, որովհետև դպրոցի բացումը հե-  
տևեալ օրը՝ նոյեմբերի երեքին էր նշանա-  
կուած, որ ասել է թէ՝ անձրևի վրայ ուշա-  
գրութիւն դարձնելու նա իսկի ժամանակ չու-  
նէր. մանաւանդ որ հացի կարիք ունեցողը  
թրջուելուց չի վախենալ: Այդ գիւղում նա  
ծանօթ չունէր. և որովհետև մեր այժմեան  
նիւթապաշտ ժամանակում այլևս չկան նախ-  
կին բարեպաշտ և հիւրասէր օջաղնեփը, և մի  
այլ յարմար տեղ ևս չկար, ուր կարողանար  
մնալ, առ հարկից ստիպուած նա պիտի իշե-  
ւանէր «Ոսկէ-վազ» անունով պանդոկում, ե-  
թէ չէր կամենում ցրտից փէտանալ, կամ քաղ-

ցածութիւնից տանջուել։ Բայց չնայելով այդ բանին, օրիորդն էլի չէր կամենում իջևանել պանդոկում։ Ահա այդ պատճառով ջորեպանը իւր պարտքը համարեց՝ օրիորդին համոզելու գիտաւորութեամբ քանիմի կծու խօսքեր ուղղել որպէս թէ ջորուն։ Խեղճ անասունը հօչէր կարող այն սարսափելի անձրեսին կանգնած մնալ միմիայն նրա համար, որ օրիորդի խելքին փշել էր կամակորութիւն անել։

Դէ, ամենքդ էլ լաւ գիտէք, որ պանդոկ ասածդ շատ էլ օրինաւոր և իջևանելու յարմար տեղ չէ մի վարժուհու, մի պատուաւոր աղջկայ համար, և այն էլ այնպիսի նըւազ, յոգնած ու տանջուած հէք արարածի համար, որի ամբողջ ներքին տշխարհը պարզ արտացոլում էր նրա խոշոր ու մատաղ աշերի մէջ։ Բայց ուրիշ միջոց, ուրիշ ճար չկար, նա պէտք է սրտապնդուէր և պանդոկ մտնէր։

Տասնաչափ ջորեպաններ նստուած էին պանդոկում վառուող «բուխարու» առաջ։ Դըրանք ամենքն էլ եղանակից էին գանգաւում։ Նրանց վրայից գոլորշին այնպիսի առատութեամբ էր բարձրանում, որ ասես թէ լուլիսին արեգակի տակ փռած թաց շոր լինէր։ Ըստարձակ, բայց մութ սենեակի մնացած մա-

սում մօտ տասը հոգի էլ տեղական շինական-ներից կային նստուած։ Դըրանք թուղթ էին խաղում և հետն էլ կծագան մաճառն այն-պէս կոնծում, որ հեռուից տեսնողը կըկար-ձէր, թէ աղքը ջուր են խմում։

Օրիորդը երբ մտաւ պանդոկ, մնաց տարեկուսած։ Նա չգիտէր ո՞րտեղ տեղ բռնի իւր համար, մօտիկ եղած անկիւնում նա մնաց կանգնած՝ բոլորովին յոգնած, մի բառ արտասանելու անգամ անկարող։ Նա իւր շուրջը նայեց՝ պանդոկապետուհուն տեսնելու յուսով, հակառակի պէս նա էլ չէր երևում։ Սարսափը պատեց հէք աղջկան։ Եւ ճիշդ որ սարսափելի էին այն՝ գգգզուած միրուքով ու բազէի աչքերով յաղթանդամ շինականները։

Խեղճ աղջկայ շունչը կըկնւում էր պանդոկի միջի թանձը ծխից ու անտանելի ծանը օդից։ Կակծալուց նրա աչքերից սկսեց արտասուք վագել։ Եւ նա այլևս ոտքի վրայ կանգնելու ոլժ չունենալով, քիչ երերաց և՝ ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս, ձեռը թեթևակի գիպցրեց երկար միրուքաւորներից մէկի ուսին։

— Գր՞նդը քեզ տա... գոչեց գիւղացին։ միայն երբ երեսը յետ շրջելով նրա աչքովն ընկաւ խեղճ աղջիկը՝ գոյնը թռած, բազմա-

Հարիչար Մայր Աստուածածնի նման սպիտակ,  
հակոյանքը սառաւ նրա որկորում։ Թէ կէտև  
ակամալ բայց և այնպէս գիւղացին խօսին տե-  
ղից վեր թռաւ և կրակի առաջ իւր բռնած  
տեղը օրիորդին զիջաւ, իսկ ինքը գնաց այն  
անկիւնը, ուր ընկերները մաճառով հիւրասի-  
րում էին իրար։

Օրիորդը նստելիս փէշերը լաւ հաւաքեց,  
որպէսզի որքան կարելի է քիչ տեղ բռնի կրակի  
առաջ, և գլուխը խոնարհեց կրծքին։ Բուխարու  
մէջ վառուող կրակի բոցի օգնութեամբ նա-  
աւելի պարզ որոշեց իրան շրջապատող մարդ-  
կանց և առարկանները։ Այդ գիտողութիւնից  
նրա երկիւղն աւելի ևս սաստկացաւ։ Տէ՛ր Աս-  
տուած, այս ուր է ընկել ինքը. որտեղ պէտք  
է գիշերն անցկացնի. միթէ այս գիւղի բոլոր  
մարդիկ, սրանց նման անտաշ ու սարսափելի  
են։ Ա՛խ, գոնէ կարելի լինէր մի կնոջ երես  
տեսնել։ Եւ այդտեղ կին չգտնուիլը խեղճ աղջ-  
կան այնպէս դժուար թուաց, որ սկսեց ծա-  
ծուկ արտասուել։ Լացը միքիչ թեթևացրեց  
նրան։ Ապա երբ գլուխը վեր բարձրացնելով  
իւր շուրջը նայեց, մթութեան մէջ, բուխա-  
րու կողքին նրա աչքովն ընկաւ մի աղքատ  
տղալի օտարութի կերպարարքը։ Տղան այդ րո-  
պէին կկըզած դիրքով էր. նա գլուխն այնքան

էր խոնարհեցը կրծքին, որ միրուքը ծընկ-  
ներին էր գիպչում. նրա մազերը երկար էին  
և գզգզուած։ Տղան իւր շիլ աչքերը յառած՝  
ամենալի ուշադրութեամբ նայում էր ուղղա-  
կի օրիորդի երեսին. իսկ նրա կողքին, յատակի  
վրայ, պառկած քնած էր մի ահազին շուն՝  
սրածալը մեխերաւոր լայն վզակապով։ Դուրսն  
անձրւը շարունակում էր տեղալ այնպէս  
շփշփալէ և աղմուկով, որ ասես թէ անտա-  
ռի մէջ բարձրացած փոթորիկ լինէր։ Այդ աղ-  
մուկը մասսամբ անլսելի էր գարձնում չիբու-  
խը բերաններին փստացնող ջորեպանների  
խոպոտ ձայները։ Մի երկու-երեք հոգի ևս  
այդ ձայն-ձունի տակ փառաւորապէս խում-  
փացնում էին կրակի մօտ երկարումէկ ձը-  
գուած։

Վարժուհին իւր ամբողջ էութեամբ սառ-  
սուաց։ Անձեւից մինչև ոսկորները թրջուած,  
լեռնային նեղ կածածները ջորիով անցնելուց  
բոլորովին ոյժից ընկած, նա յոյս ունէր՝ թէ  
տաք սենեակ ու մաքուր անկողին կըդտնի  
գիւղում, մինչդեռ այժմ չգիտէր անգամ, թէ  
ում հետ գոնէ մի խօսք փոխանակէ, և այդ  
ըովակին նա նոյնն էր զգում, ինչ որ զգում  
է մի անօդնական մանուկ, որ «մայրիկ» է  
ձայնում, բայց մալրիկը չի լառում նրան։

Օրիորդն զգում էր որ այդ կոպիտ ու  
անտաշ ռամիկները՝ առանց քաշուելու, ամե-  
նախ հետաքրքրութեամբ իրան են մտիկ տա-  
լիս: Ուամիկը միշտ էլ այդպէս է: նա փափա-  
գում է գիտենալ, թէ Աստուած ում հետ է  
պատահեցրել իրան: — «Տեսնես ով է լինելու  
այս աղջիկը», ահա այդ հարցն էր պարզ կար-  
դացում նրանց լայն բացած աչքերի մէջ: —  
«Երեսհարքից լաւ աղջիկ է երևում, բայց իսկը  
ով է ճանաչում նրան: Ով գիտէ ծաղրածուի  
մէկն է. երևի փողոցում հասարակութեան ա-  
ռաջ կըսկսի գլուխկոնձի տալ, գլուխլոր գալ.  
կամ ով է իմանում, շատ կարելի է որևէ  
խարեւայի կամ ձեռնածուի քոյրն է կամ կի-  
նը . . . : Դատարկապորտ մարդիկ. դրանք ա-  
մենքն էլ միշտ այդպէս քաղցած մարդու աչ-  
քեր են ունենում: Այն էլ ի՞նչպիսի ժամա-  
նակ է եկել մեր գիւղը. հենց կարծես թէ  
ինքներս քիչ կարիքներ ունինք, կամ ամբար-  
նիս լքցուել է հացով . . . »:

Նրանց այդ լառած հայեացքներն աւելի  
էին անհանգստացնում խեղճ աղջկան, քան թէ  
բոլորովին թրջուած հագուստը, որ ամբողջա-  
պէս ընդգրկած էր նրա մարմինը: Նա ցան-  
կանում էր դուրս գալ այդտեղից, իրան ձգել  
մաքուր, թարմ օդի մէջ. նա փափագում էր

եկեղեցում ծնկի եկած աղերսանօք հայցել  
Աստծուն, թէ ինչու նա մահ չի դրկում իւր  
համտր: Նա մեռնելն աւելի լաւ էր համարում:  
Սակայն դուրսը ոռնում էր քամին և լեռնա-  
յին քարանձաւներից անցնելով գալիս մոլեգ-  
նաբար ներս սպրդում գիւղը. օրիորդին այլ  
ևս ոչինչ չէր մնում անելու, բայց եթէ խո-  
նարհուել ճակատագրին և իւր կամքի հակա-  
ռակ մնալ պանդոկում:

Նինականները շարունակում էին իրանց  
կոնծաբանութիւնը, հետն էլ վախեցած սագե-  
րից վատթար աղմուկ ու աղաղակ բարձրա-  
ցրած, կծու-կծու խօսքեր շպրտում իրար երե-  
սի, իրանց ահագին բռունցքներով ամուր-  
ամուր խփում սեղանին և կամ ձայն տալիս  
պանդոկապետուհուն: Իսկ նա չկար ու չկար:

Վերջապէս եկաւ պանդոկապետուհին՝ շըր-  
ջաղգեստի փէշերքը գլխին հովանի բռնած,  
ձեռքին էլ երկու ահագին գաւ գինով լիքը:

— Իսկի կտրուելու միտք չունի. ողոր-  
մած Աստուած, այս սելաւը գեռ կտրուելու  
միտք չունի...: Միշերկու քայլ հագիւ կըլինի  
մինչի մառանը, բայց և այնպէս մինչի ոս-  
կորներս թրջեց:

Նինականներն իսկոյն շրջապատեցին պա-  
ռաւին. իսկ նա գինու գաւերը դրեց սեղանի

վրայ, փէշերքը վայր թողեց, հագուստն ուղղեց և ապա մօտենալով բուխարու կողքին երկարումէկ ձգուած աղքատ տղային, ոտքով հրեց կոպտաբար.

— Տօ, անպիտան, ինչ ես շնթռկել. վերտեղիցդ, թէ չէ . . . : Այդ տուտն ուր կ'երթայ, եթէ որ ով ասես գայ ու այստեղ ձգուի այդպէս. . . : Տղէք ջան, յետոյ դիմեց պառաւը շինականներին, դուք ինքներդ ածեցէք գինին, ես ձեզ հաւատում եմ. մի գնամ ձեռքերս տաքացնեմ, փէտացել են բոլորովին:

Խեղճ տղան վեր կացաւ, զարթեցրեց իւրգամփոխն և քալլերն ուղղեց դէպի դուռը, աչքի տակով նայելով վարժուհուն, որի հետ այդ ըոպէին խօսում էր պանդոկապետուհին:

— Ուրեմն դուք վարժուհի էք, հա, օրիորդ. քեզ բերող ջորեպանն ասաց ինձ . . . : Այն էլ այսպէս ժամանակ, ալսպէս վատ եղանակին. . . :

Օրիորդը՝ որպէս այդ խօսքերի պատասխան, աշխատեց ժպտալ և ապա ասաց.

— Խնդրեմ ասէք, որտեղ կարող եմ հանգստանալ. ես շատ եմ լոգնել և բոլորովին թըրջուած եմ:

— Ա՛խ, ջանս քեզ մատաղ օրիորդ, ինչ անեմ, որտեղ տեղաւորեմ քեզ. Մենք բացի

չարդախի խոտից էլ ուրիշ բան չունինք, ու մէկ էլ խոտով լքցըրած մի ներքնակ. դրանցից աւելի էլ ուրիշ բան չունինք:

Եւ ապա մի քիչ մտածելուց յետոյ գլուխը տմբտմբացնելով վրայ բերեց.

— Գիտե՞ս ինչ է, օրիորդ. Ես իմ սեպհական անկողինն ունիմ: Հիմա ոնց անենք որ աւելի լաւ լինի. արդեօք իմ ծոցումը կըքնես: Իմ մարդը գոմումն էլ կըքնի, նա սովոր է: Ա՛յ այդպէս լաւ կըլինի, եթէ միայն կամենաս:

Օրիորդը սիրով և մինչև իսկ ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և սուսուփուս տեղից վեր կացաւ գնաց պառկելու:

Պառաւի ասած սենեակը ներքին յարկումն էր, յատակը հողից և շատ մութը. անկիւններից մինում դրուած էր Ս. Աստուածածնայ կաւէ անդրին՝ մի անձաշակ ձեռակերտ, կըռներից մինն էլ պոկ եկած: Անդրիի առաջ կախուած էր մի կանթեղ, որ շատոնց էր՝ չէլն մաքրած, և որի միակ աղոտ լուսով էր սենեակը լուսաւորւում: Անկողնակալը շատ բարձրն էր և այնպէս մեծ, որ բոնել էր սենեակի ամբողջ կէսը: Սենեակի մէջտեղը դրած «մանղալը» լաւ չէր տաքացնում. օդը

ծանր էր, խոնաւ և ծխով լցուած։ Օրիորդը  
երբ ներս մտաւ, ամենից առաջ նրա աչքովն  
ընկան դիմացի պատից կախած երկու ատըր-  
ճանակ և երկու հատ էլ եզնապող, իսկ դրանց  
մէջ տեղը փայտեայ Խաչելութիւնը։ Նա թէ-  
պէտ նայում էր իւր շուրջը, բայց մեքենայ-  
աբար, որովհետեւ ոյժ չունէր իւր տեսածնե-  
րի մասին խորհելու։ Նտապով հանեց թաց  
հագուստը և տանտիրուհուն տալով խնդրեց որ  
տանի ցամաքացնի ու ինքը տեղը մտաւ։  
Գլուխը բարձին Պնեխն ու քունն աչքերին  
մօտենալը մէկ եղաւ։ Նա դեռ շատ մատաղ  
էր։ Զարթեց միայն գիշերուայ կիսին, որից  
յետու երկար միջոց այլևս չկարողացաւ աչք  
կպցնել։ Նա պարզ լսում էր պատի միւս կող-  
մում՝ գոմում կապած ձիանոնց ու ջորիների  
դոփիւնը և առաջներն ածած խոտը դռըփ-  
դռըփալէ ուտելու ձարնը. նրա ականջին էին  
հասնում ճանապարհուելու պատրաստ ջորի-  
ների վգերից կախած բօժօժների ճնկճնկոցը և  
զանգուլակների ճնգլտոցն ու զնգզնգոցը. նա  
լսում էր նաև ջորեպանների խուպոտ ձայները։  
Ապա մի քիչ յետու էլ գիւղի աքաղաղներից  
մինը խօսեց։ Վարժուհու աչքերից քունը բո-  
լորովին փախաւ և նա սկսեց՝ թէւ ակամար,  
իւր աննախանձելի վիճակի վրայ խորհել։

Սպալի աղջիկ էր օրիորդը. դեռ շատ  
փոքր էր, որ զբկուելով ծնողներից մնաց  
որբ։ Հասարակութիւնը վրան խղճալով դըպ-  
րոց տուեց, ուր սովորում էր լաւ և մեծ ջա-  
նասիրութեամբ, այլապէս նրան չէին պահիլ։  
Քանիմի տարուց յետոյ դպրոցի գասնթացքը  
յաջողութեամբ աւարտելով, ուսուցչութեան  
վկայական ստացաւ։ Սակայն հէնց այդ վկայ-  
ականն էլ զբկեց խեղճ որբին այն մի կտոր  
հացից, որ ստանում էր դպրոցում ուսանելիս.  
վասնզի ուսման ընթացքն աւարտելով նա  
այլես չէր կարող մնալ դպրոցում։ Ամբողջ  
աշխարհի մէջ մեն-մենակ, կիսաքաղցած ստա-  
մոքսով, առանց մի հատիկ ազգականի, բա-  
րեկամներից զուրկ, դռնէ դուռն ընկած՝ նա  
իւր համար պարապմունք էր որոնում։ Նատ  
դէսուդէն ընկնելուց, շատ աշխատելուց յե-  
տոյ վերջապէս կարողացաւ նահանգական քա-  
ղաքի դպրոցական խորհրդից ուսուցչուհու  
պաշտօն ստանալ գաւառի գիւղերից մէկում,  
որի ժողովուրդը՝ դէմ լինելով աղջկանց դըպ-  
րոցի բացման գաղափարին, միքանի տարի  
շարունակ յամառ ընդդիմութիւն էր ցոյց տա-  
լիս ուսումնարանական վարչութեան։  
Գիւղացիք այն կարծիքի էին, թէ կանանց  
գործն իսկապէս միայն կարուձեն ու եփե-

լը պիտի լինի և ոչ թէ ուսումնական բանե-  
րով պարապելը:

Վարժուհին մտաբերեց դպրոցում ունե-  
ցած իւր համարձակ և վարդագոյն երազները,  
որոնցով փայփայում էր իրան, այն է՝ իւր  
շուրջը ժողովել մի խումբ կայտառ, ուրախ,  
սիրուն-սիրուն ու փոքրիկ աղջիկներ և քաղց-  
րութեամբ ու սիրով ուսուցանել այդ անմեղ  
արարածներին այն ամենը, ինչոր ինքն ու-  
սած էր. նա երազում էր մի կտոր սեպհա-  
կան հաց ունենալ և կեանքի մէջ ևս՝ նպա-  
տակ. և ով գիտէ, իցէ թէ նաև սէր, բարե-  
կամութիւն. . . և այդ կերպ հանգիստ ապ-  
րել մի որևէ առանձնացած սիրուն հովտի  
մէջ, ուր մարդուս հոգին կարող է խաղաղ ու  
անդորր լինել, հաւատ ունենալ դէպի կեանքն  
ու դէպի իւր անձը և աշխուժով ու եռան-  
դով աշխատել: Խոկ յետոյ. . . խաղաղ ու հան-  
գիստ էլ մեռնել: Կրտանեն հանգստարան,  
գերեզմանի վրայ ծաղիկներ կըսփռեն, այնու-  
հետև միշտ կըմտաբերեն և ողորմի կըտան. . . :

Այս ինչ այդ ամենի փոխարէն հիմա նա  
պէտք է միշտ յուրտ, անձը տանէր և՝ աղ-  
ջիկ տեղովը պանդոկում գիշերէր:

Եղաւ ըովէ, որ խեղճ աղջիկը քիչ մնաց  
լաց լինէր, երբ միտն ընկաւ մալրը: Հոգե-

կան մեծ ոյժ էր պէտք, որպէսզի կարողա-  
նար իւր հեծկլտանքը պահել:

— Մար իմ, մայր իմ, շշնջաց հէք աղ-  
ջիկը, ինչու թողիր ինձ մենակ, ինչու դու  
ինձ մենակ թողիր. . . .

❖

**L**ուսացաւ: Տանտիրուհին բերաւ վար-  
ժուհու ցամաքած շորերն ու փոքրիկ «չամա-  
գանը», որ նրա բոլոր ունեցած-չունեցածն  
էր: Թէպէտև պանդոկապետուհին՝ արտաքուստ  
խիստ և կոշտ ու կոպիտ էր երեսում, բայց  
իսկապէս շատ բարի սրտի տէր կին էր:

— Օրիորդ, եթէ կամենում ես տանուտէ-  
րի հետ խօսել, պէտք է շտապես, եթէ ոչ  
նա կ'երթայ իւր ձիթահանքը և այնուհետև  
մինչի երեկոյ էլ որ սպասես, էլի չես կարող  
տեսնել նրան:

Ուսուցչուհին բան չասաց այդ առարկու-  
թեան, այլ իսկոյն հագաւ շորերը, մագերը  
սանդրեց և ապա դիմեց պառային.

— Խնդրեմ ցոյց տաք, թէ ո՞ր կողմով պի-  
տի գնամ տանուտէրին:

— Այս ըոպէիս քեզ մօտ կ'ուղարկեմ Զիկունանոլին. նա քա քեզ կ'առաջնորդի:

Այդ Զիկունանոն նոյն աղքատ տըղան էր, որ քնած էր բուխարու առաջ: Վարժուհուն ճանապարհ ցոյց տալու համար նանօն առաջ ընկած գնում էր գիւղի փողոցներով:

Եւ որքան օրիորդը առաջ էր գնում, այնքան աւելանում էր նրա երեկուան երկիզը: Միալար նրա աչքի էին ընկնում յարդախառն կաւով սուաղած մոխրագոյն տներ, քանդքանդորուած խրձիթներ, որոնց մօտ գիզուած էին տաւարի ահագին աղքակոյտեր. փողոցները ծուռնումուռը, ցեխով լիքը, մըռալլ ու նեղիկ-նեղիկ: Միայն մի-մի անգամ պատահում էր ծաղիկներով ու վազներով շըրջապատուած միքիչ կարգին շինած տներ, իսկ այնուհետև դարձեալ նոյն քոնձուոտ—աղքատին հիւղերը: Միւնոյն անշուք դրութեան էր նաև գիւղական փոքրիկ եկեղեցին, որի ծեփը համարեա բոլորովին թափթփուած, զանգակատունն էլ կիսաքանդ: Մէկ խօսքով՝ ամեն տեղ էլ ճնշող տաղտկութիւն էր տիրապետում. իսկ այդ միւնոյն տաղտկութիւնը, ասես թէ աքցանով, բռնել էր նաև հէք աղջկալ սիրտն ու հոգին:

41 - 96

— Ա՛յ, այն աղիւսաշէն տունն է, — մատով ցոյց տուեց նանօն տանուտէրի բնակարանը: Այնտեղ առաջ վանք է եղել, որ հետզհետէ քանդուելով, այժմ հողին է հաւասարուել:

Ուսուցուհին պիտի հէնց այդ տունը մըտնէր: Երբ օրիորդը ոտը ներս դրեց, նրան այնպէս թուաց, թէ ցուրտը կրկնապատկուեց:

Տանուտէրը մի ուռած-փքուած, հաստափոր, «բոխախը» կախ ընկած, կարմրաթուշ գիւղացի էր: Նա այդ ըոպէին քիսաքանդ բուխարու առաջ նստած ծխում էր:

Երբ վարժուհին մօտենալով պաշտօնական թուղթը տուեց տանուտէրին, վերջինս մինչև անգամ նրա երեսին էլ չնայեց, նոյն իսկ չհրաւիրեց նստելու, այլ իսկոյն սկսեց փընթփնթալ, կաւափարութեան ու նահանգապետի արած բոլոր կարգադրութիւնները պախարակել և իւր անքաւականութիւնները լայտնել այդ նոր կարգերի վերաբերմամբ: — «Հը», լուսաւորութիւն են ուզում տարածել մեր մէջ . . . հրաշալի՛ բան է այդ լուսաւորութիւնը՝ էլ ասել չի ուզիլ... Դիւղի հասարակութեանն ստիպում են ուոճիկ վճարել այն մարդկանց, որոնց նշանակում են նահանգական քաղաքում, առանց մեր կամքը հարցնելու...: Մեր ինչին է

պէտքը ուսուցչուհին։ Կամենում ես ճշմարիտն իմանալ... գիւղացոց հաց, հաց է հարկաւոր... : Թէ չէ՝ վարժուհին եկել է, թէ չի եկել, կը մնայ, թէ կ'երթայ, այդ բոլորը ողջ մէկ է գիւղի հասարակութեան համար։ Եւ օրիորդն իսկի լաւ չի արել, որ վեր է կացել եկել առանց վաղօրօք ինձ իմաց տալու։ Զլինք թէ մենակ է եկել... Տեսնում էք. մենամենակ ճանապարհորդութիւններ է անում. իսկ եկած օրն էլ գիշերել է պանդոկում. . . : Լաւ օրինակ է մեր աղջկերանց համար՝ էլ ասել չի ուզիլ . . . ալլևս այդ տեսակ վարժուհուց ինչ մի լաւ բան պիտի սովորեն աշակերտուհիները . . . : Է՞հ, ինչևեցէ, կը տեսնենք . . . : Մենք վարժուհի որոնելու կարիք չունեինք, մենք մերերն ունինք. մի երկու աղջիկ կայ, որոնք նոյնպէս ուսեալ են և մերոնք են, որոնց ժողովուրդը աւելի լաւ է ճանաչում, քան թէ քամու բերածներին . . . :

— Ի՞նչ և է, լաւ, — խօսքը վերջացրեց տանուտէրը և աչքերը վեր բարձրացրեց ու տեսաւ իւր դիմաց կանգնած աղջկան՝ աչերն արտասուրով լի, գոյնը բոլորովին թուած։

— Լաւ, կը մտածեմ. . . : Դէ ես հօ քեզ չեմ զոնդում։ Զէ որ դեռ մտածել է հարկա-

որ. դեռ պէտք է նրանց գրել և ապա թէ... յետոյ. . .

Վերջապէս վարժուհին սրտապնդուելով խօսեց.

— Յարգելի տանուտէր, ես մի խեղճ, որբաղջիկ եմ. ինձ բնակարան է հարկաւոր։ Դրացի մասին ի հարկէ գուք կը հոգաք։ Միայն խնդրեմ մեծահոգի եղէք և ինձ մի բարի խորհուրդ տուէք։

Վարժուհու խօսքերը տանուտէրի ունքամէջը բաց արին. նրա համար հօ դժուար բան չէր գպրոցի համար մի հասարակ տեղ և վարժուհու համար էլ բնակարան ճարելը. բացի դրանից ինքը մի երկու դատարկ տուն ունէր, որոնց ոչ ոք էր վարձում, մին որ՝ իսկի բնակուելու բաներ չէին, մէկ էլ՝ որ գիւղից գուրս էր և նրա ետևն ընկած։ Մտաբերելով իւր այդ աչքաթող արուած տները, տանուտէրը ժպտաց, յետոյ դիմելով վարժուհուն ասաց.

— Եկէք վաղը, միք յուսահատուիլ. կը-մտածեմ։

Վարժուհին փողոց գուրս գալով տեսաւ մի խումբ պատառուտուած շորերով, ցեխաթախին երեխաներ։ Դրանք բոլորն էլ այդտեղ կանգնած վարժուհու ելնելուն էին սպասում։

Հէնց որ տեսան նրան, իսկոյն վազեցին դէպի նա. և թէպէտ քաշուելով բայց մեծ հետաքրքրութեամբ այնպէս էին նայում նըրան, որ հէնց գիտենաս «ազիզ» օրուայ զարդարանք էր, կամ գիւղը նոր ոտ դրած ծաղրածու: Զիկու-նանօն մի առանձին բաւականութեամբ և համարեա թէ հպարտութեամբ պաշտպանում էր վարժուհուն և խոիկ տալիս երեխաներից աւելի համարձակներին ու ձանձրացուցիչներին՝ որին քացի տալով, որի դնչին ծեփելով, կամ վզակոթին հասցնելով և որին էլ փախցնում էր՝ շունը վրան հիս-անելով: Փողոցին նայող ծխոտ տների առաջ ու լուսամուտների մօտ նստոտած կամ կանգնոտած էին գիւղի կանալք. դրանցից ո՞րը ճախարակ էր մանում, ո՞րն իլիկ, ո՞րը գուլբայ կամ այլ բան գործում, ո՞րն էլ իւր գրկի մանուկին ծիծ տալիս: Դրանք ամենքն էլ նայում էին վարժուհու վրալ այնպիսի աչքերով, որոնց մէջ նկատելի էր և ցաւակցութիւն, և' ծաղը: Թուում էր թէ նըրանք ասում էին.—«Սիրելի օրիորդ, դու քո այդպէս նազիկ տեղովդ ոնց պիտի գլուխ հանես մեր երեխանց հետ»: Սրճարանից էլ վարժուհու հանդէպ դուրս եկան չորս թէ հինգ ստահակ երիտասարդ՝ ձեռքները գրապաննե-

ըում դրած, չիբուխը բերաններին. դրանք բոլորն էլ աչքները չորս բացած՝ սկսեցին նայել իրանց մօտից անցնող նորեկ օրիուղի վրայ:

Խեղճ աղջիկն զգալով որ ամենայն հետաքրքրութեամբ իրան են մտիկ տալիս, սաստիկ դժուարն եղաւ: Նա կըկամենար փոքրանալ, բոլորովին պստիկանալ, որպէսզի կարողանալ աննկատելի կերպով փախուստ տալ այդ անպատկառ հայեացքներից: Օրիորդը քարլերն արագացրեց, բայց անպատկառ հայեացքները շարունակում էին հետևել նրան: Երբ հասաւ պանդոկ, ուղղակի, համարեա վազելով, գնաց մտաւ պանդոկապետուհու ննջարանը և ուժասպառ ընկաւ առաջին պատահած աթոռի վրայ: Մի քանի րոպէ շարունակ նա լըսում էր միայն իւր սրտի բաբախումը և Զիկու-նանոյի շան զայրացկոտ մոռոցը հետաքրիւների վրայ: Յետոյ նա գլուխը գնելով բարձին՝ այդ դրութեան մէջ մի տեսակ անզգայութեան—թմրութեան մէջ ընկաւ. իսկ արտասուքը հոսում էր նրա այտերի վրայից: Երեսը մեռելի գոյն էր ստացել: Այդ րոպէին պառաւը՝ թևերը մինչև արմունկը վեր քաշած, շերեփը ձեռին, գլուխը դռնից ներս տանելով ծկրակեց. բայց կարծելով թէ օրիոր-

գը քնած է, էլ ներս չմտաւ, այլ կամացուկ հեռացաւ, քթի տակին վինթվինթալով ու իւր զարմանքը յայտնելով, թէ աշխարհիս երեսին ո՞նց են գտնում այդպէս անսիրտ մալրեր, որոնք իրանց մարմինն ու արիւնը—իրանց հարազատ զաւակին թոյլ են տալիս գնալ օտարների մօտ գործ կատարելու։ Այդ միտքը մինչև անգամ պառաւի բարկութիւնը շարժեց, և նա անմիջապէս վճռեց՝ որ երբ օրիորդը զարթնի, ոչխարի մսից տապակայ ուտացնի և վրան էլ մի բաժակ հին ազնիւ գինի խմացնի։

Քանի մի հոգի՝ պարապութիւնից թէ հետաքրքրութիւնից դրդուած եկան պանդոկ և դիմելով պառաւին՝ սկսեցին հարցուփորձ անել. — Ո՞րտեղից է եկել այդ աղջիկը. քանի տարեկան կըլինի, անունն ի՞նչ է. ում մօտ պէտք է ապրի. ո՞րտեղ է սենեակ վարձելու իւր համար. . .

— Ա՛խ, մահի տարածներ, — բարկացած վրայ պըծաւ պառաւը... սատկէք դուք, սատկէք. լաւն այն չի լինի որ դուք գնաք ձեր կանանց, ձեր քոյլերի ու աղջկանց հոգսը քաշէք։ Ի՞նչ էք եկել բկիս չոքել, ա գրողի թակածներ. . . : Կորէք, կորէք, քաջուեցէք, եսձեր գլուխը չունիմ... : Էէէ, անիծածներ,

եթէ ուրիշ բանուգործ չունիք, ահա գնացէք այն ծառից կախուեցէք, պրծաւ գնաց . . . էլ ի՞նչ էք ուզում ուրիշներից . . . :

Պարապ թրև եկողներն ու հետաքրքիրները հեռանում էին՝ ծոծրակնին քորելով, և իրանց այդ անյաջողութեան ու կրած պարտութեան համար վարժուհու վրայ էին զալրանում։

¶

**Վ**արժուհին ստիպուած էր մի երկու շաբաթ էլի մնալ պանդոկում։ Նա միքանի անգամ դարձեալ գնաց տանուտէրին. բայց ամեն անգամ էլ՝ երբ նա իջնում էր աղիւսաշէն հին տան սանդուղքներից, ուր զետեղուած էր գիւղական վարչութիւնը, — նրա աշերը լիքն էին լինում արտասուքով և ինքն էլ պռնկնոտալիս։ «Մեր տէրտէրը, ասում էին օրիորդին, միայն սոխ ու հացով է եօլա գընում, որպէսզի միջոց ունենալ իւր քըոջ աղջկան վարժուհու պաշտօնի համար պատրաստել տալ, իսկ հիմա դուք ո՞րտեղից որտեղ՝ կարծես երկնքից վայր ընկաք, եկել էք և ուզում էք գրաւել այդ տեղը, որ ամենայն իրաւամբ

մեր տէրտէրի քըոջ աղջկան է պատկանում։ Բացի դրանից գեղագործ Դօն-Զիջոլոն նոյնպէս կամենալով այդ տեղը ձեռք բերել իւր աղջկայ համար՝ մի-գլուխ այն էր գոռում, թէ ինքը երբէք թոյլ չի տալ, որ մի որևէ անցորդ գայ և իւր աղջկայ բերանի պատառը խէ։ Սակայն տանուտէրը՝ որի հոգսը միայն իւր խարխուլ տները վարձով տալն էր, պատրաստ էր ընդունել վարժուհուն, միայն թէ մինչև օգոստոս, որովհետեւ այդ միջոցին պիտի գիւղ վերագանային թէ տէրտէրի քեռորդին և թէ գեղագործի աղջիկը։ ուստի մինչև նրանց գալը վարժուհին կարող էր մնալ իւր պաշտօնում, իսկ դրանից յետոյ թո՛ղ իւր փասափումէն քաշէր։ Դիւղացիք տանուտէրին շատ պարզ կերպով ապացուցանոմ էին, որ այդ չափ զիջողութիւն ևս հարկաւոր չէ, որովհետեւ մի անգամ պաշտօնի մէջ մտնելով աւելի ամուր կըհաստատուի, որից յետոյ այլևս դժուար կըլինի նրան հեռացնելը։ Զէ որ կառավարութիւնն է սրան ուղարկողը, իսկ կառավարութիւնը միշտ էլ բաղդախնդիրների կողմն է ըռնում . . . :

Բարեբաղդաբար տանուտէրը իր-ասածի և կամակորի մէկն էր, աւելի կամակոր՝ քան նոյն իսկ Ուեկիամօցցալի ջորին. նա հաստատ

մնաց իւր մի անգամ ասածի վրայ և վճռապէս յայտնեց.

— Ես այսպէս եմ կամենում և այսպէս էլ պիտի լինի։

Ուղիղ որ հէնց այդպէս էլ եղաւ։ Նինական վարչութիւնը տանուտէրից վարձեց նրա երկու տունը՝ մինը դպրոցի համար, իսկ միւսը վարժուհու մնալու համար։ Բայց որովհետեւ այդ սենեակները երկար միջոց աչքաթող մնալուց հնացել ու ծակծակոտուել էին, ուստի սուաղով ծեփեցին ծակուծուկերը և մի երկու դուլ կիր էլ քսեցին սպիտակացնելու համար։ Պանդոկում ապրող վարժուհին տեղափոխուեց ալդտեղ և սկսեց իւր դասատութիւնը ալդ սառցատանը։ ուրիշ ինչ անուն կարելի էր տալ այդ սենեակներին, որ աւելի ցուրտ ու խոնաւ էին, քան մի գետնափոր սապացատուն։

Այդ օրը հինգշաբթի էր։ Զիկու. Նախօն ուսը կալաւ վարժուհու փոքրիկ «չամադանը» և առաջ ընկաւ։ Մնաս բարով ասելիս վարժուհին խնդրեց պանդոկապետուհուն ասել՝ թէ ո՞րքան է իւր տալիքը։

— Է՞հ, դեռ դրա համար ժամանակ կըլինի, հոգիս։ Այս անտաշ ջորեպանները լաւ վարձատրեցին ինձ այս շաբաթ . . .։ Հի-

մա ինձ փող չի հարկաւոր, դու քեզ համար հանգիստ գնա. դրա համար թող քէֆդ չկոտրուի: Դու ինձ շատ դիւր եկար: Եթէ վառելիք ուզենաս, լառանց քաշուելու ասա, ես ուրախութեամբ ինքս անձամբ կըգամ և կըվառեմ վառարանդ . . . ահա թէ ինչպէս ես դու ինձ դիւր եկել, անկեղծաբար խօսեց պառաւը և ապա գրկեց վարժուհուն ու համբուրեց:

Վարժուհին հետևեց նանոյին. իսկ պառաւը դեռ երկար միջոց կանգնած մտիկ էր տալիս նրբափողոցներով հեռացող օրիորդին, երբ նա բոլորովին հեռացաւ, նոր ներս մըտաւ փնթինթալով.

—Միթէ աշխարհիս երեսին ալդպէս անսիրտ մայրեր էլ են լինում, որոնք թողնում են իրանց հարազատներին գնալ թափառելու օտարութեան մէջ. . . : Խեղճ աղջիկ. շատ կարելի է չդիմանալ մինչև աշունք. չափազանց նուազ է . . .

Վարժուհին երբ մօտեցաւ այն տնակին, ուր ինքը պիտի ապրէր, կանգ առաւ դռների առաջ: Ամբողջ կացարանի կազմակերպութիւնը հետեւալն էր.—Սենեակը՝ որ գտանում էր փողոցի վրայ, հողէ յատակով էր. անկիւններից մինում բուխարի կար. այդ ներ-

քին յարկն էր: Իսկ այդ միւնոյն սենեակի միջեց շարժական սանդուղքը տանում էր երկրորդ յարկը, որ ննջարանի տեղ պիտի ծառալէր:

Զիկու-նանօն «չամադանը» գրեց գետնին և հարցակոն հայեացք ձգեց օրիորդի վրայ, որ դանդաղում էր իւր նոր բնակարանը ոտքնելու. նրա սաստիկ դժուարն էր գալիս: Նոր սպիտակացրած պատերի հոտը մարդու շունչ էր կտրում: Յանկարծակի եկած մի երկու-երեք մուկիկ յատակի վրայ սկսեցին դէս ու դէն վազվազել՝ շտապելուց իրանց բները չգտնելով: Լուսամտից՝ որի ապակիները լաւ չէին ամրացրած, երեսում էր առաւտօնեան լուսը: Օրը ցուրտ էր, մռայլ, անձրեային և սաստիկ խոնաւ: Զիկու-նանօն միքիչ շուրջը դիտելուց յետոյ ասաց.

—Օրիորդ, պէտք է կրակ վառել. շատ փայտ պէտք է վառուի՝ մինչև որ չորանայ:

Խեղճ աղջկայ մարմնով սարսուռ անցաւ: Նա արձակեց նանոյին, իսկ ինքը սանդուղքով բարձրացաւ ննջարանը, որի պատերը սպիտակ էին և բոլորովին մերկ. սենեակի լուսամուտը բացւում էր դէպի դաշտը, որ հիմա տխուր էր և ամայի: Լուսամուտից երեսում էին նաև սեին տուող տերեւազուրկ

ծառերը։ Օրիորդը շուրթը կծեց որ լաց չլինի և արմնկով լինուեց լուսամտի տախտակին։ Ահա ինչ բան է կեանք ասածը — անվերջ դառն աղքատութիւն։ և պէտք է չարչարուել մինչև անգամ այդ կեանքը պահպանելու համար։ Իւր երիտասարդութիւնը՝ որ սովորաբար հաւատացնում են թէ մարդուս կեանքի ուկէ ժամանակն է, պիտի անց կենայ այս գերեզմանալին մենակութեան մէջ, տխուր ու տրտում։ Եւ նրա ուղեղի մէջ յանկարծ մի միտք փայլեց իւր ապագայի մասին, որից նա սարսափեց։ . . . Քաղցած ծերութիւն, հիւանդանոց. . . : Տէր Աստուած, Տէր Աստուած. . . : Հէք աղջկայ միակ մխիթարութիւնն այն էր, որ մենակ ինքը պիտի տանջուի և միայն իւր համար պիտի հօգայ։ Իցէ թէ իւր բարի մայրիկն աղօթք անէ երկնքում և օգնէ իւր աղջկան։ Եւ նա լաց եղաւ, որից նրա սիրտը միքից թեթևացաւ։ Նա կրկին նալեց իրականութեան վրայ։ Սենեակի մէջ չկար անկողին, կահ-կարասիք և ոչ մի հատ, ամանեղէնի մասին խօսելն իսկ աւելորդ է, իսկ գրպանում միայն միքանի մանրափող ունէր։ Ինչ պէտք է լինի իւր դրութիւնը։

Ներքեցից ձայներ լսուեց։ Նա վայր իջաւ։ Չիկու-նանօն թուշերն ուոցրած եռանդով վը-

չում էր չոր ցախերի վրայ որ վառի բուխարին։ իսկ երկու կին էլ՝ մի ծղնօտէ ներքնակ և երկու աթոռ էին բերել։

— Օրիորդ ջան, այս աթոռներն իմոնքն են, իսկ ներքնակը Ֆիլօմինը տուեց։ Մեզ չկշտամբէք, մենք չունեոր մարդիկ ենք. . . սրանից լաւը մենք չունինք, ասաց կանանցից մինը,

— Իսկ պաստառակալ ու բարձեր պանդոկապետուհին խոստացաւ ուղարկել, վրայ բերեց միւսը։

Գործովի հին աթոռները ձեռքներին ներս վագեցին քանիմի աղջիկ, աթոռները դարսեցին, իրանք էլ վրաները տեղաւորուելով՝ սկսեցին չուած տչքերով վարժուհուն նայել, որ ոչ մէկ բանի չէր խառնուում. նա շարժւում էր կարծես թէ ծանը քնի մէջ։ Մի ուրիշ կին էլ եկաւ՝ կռան տակին մի կապոց, մէջը վերմակ և պաստառակալ, իսկ ձեռքին էլ մի պղնձէ ճրագ՝ ձեթով լիքը, որի ծալրին ուրախ իրեւում էր սպիտակ պատրոյկը։

— Պանդոկապետուհին ուղարկեց քեզ համար, ասաց նորեկը, որ քեզ համար անկողին պատրաստես։ Իսկ լետոյ քեզ համար պղձներ էլ կ'ուղարկէ, փայտ էլ . . .

Վարժուհին կամեցաւ բողոքել։ Ահա թէ

Էնչ օրի հասաւ, որ անծանօթ մարդիկ ողորմութիւն են տալիս և ողորմութեամբ էլ կացարան են կարգաւորում իւր համար: Եւ նրա մէջ զարթեց բնածին հպարտութեան զգացմունքը, արիւնը գլխին խփեց և նրա սպիտակ, շարմաղ երեսը ամբողջովին կարմրեց: Սակայն ճիդ թափելով՝ նա կարողացաւ գսպել իրան. ոչ մի խօսք չասաց, մօտեցաւ բռնարուն, որի մէջ կըակը վառւում էր ուրախ-ուրախ, աթոռներից մինի վրայ նստեց և սկսեց փալփալել այդ աթոռները բերող փոքրիկ աղջիկներին, որոնք թաքնուում էին իրանց մօր շրջազգեստների տակ:

— Մենք դրանց քեզ մօտ ուսումնարան կըբերենք, օրիորդ. միայն խնդրում ենք նըրանց հետ քաղցր վարուես. իսկ դրա փոխարէն մենք պատրաստ ենք՝ հէնց ինչ էլ որ կամենաս . . . քո խաթեր համար թէկուզ մինչև աշխարհի ծալրը բոբիկ ոտով վազ կըտանք...:

Եւ այդ ասելով՝ կանալք, առանց ժամանակ կորցնելու, սանդուղքով վերև տարան իրանց բերած բարիքը: Զիկունանօն ձեռքերը գրանը դրած կանգնել էր դռների մէջ և յանդիմանում իւր շանը, որ համարձակուել էր սենեակ մտնել: Կըակի տաքութիւնից վար-

ժուհին սկսեց հետզետէ իրան աւելի լաւ զգալ: Այժմ նա մտածում էր, թէ ինչպէս դասաւորի իւր աղքատին կահ-կարասիքը, որ աւելի յարմար լինի. խորհում էր տարօրինակ աղքատ տղայի մասին, այդ բաները բերող կանանց բարութեան մասին: Յուսոյ մի թոյլ նշոյլ թափանցեց նրա հոգու մէջ: Կարելի է Աստուած խղճայ և օգնէ իրան առանց մեծ նեղութեան ապրելու: Ժողովուրդը լաւ է երևում. միայն շատ ձեռպակաս են: Ի՞նչ արած՝ պէտք է աշխատած հաշտուել չըքաւորութեան հետ: Կըգայ գարունը, օրերը կը տաքանան, կըծաղկեն ծառերն ու ծաղիկները, այն ժամանակ կարելի է դաշտ դուրս գալ՝ թէ ամբողջ մարմնին հանգստութիւն տալու և թէ հոգւով թարմանալու. ուր ինքը երեխաների համար դասեր կըսպատրաստի, երգեր կըօրինի: Իւր բաղդից կարելի է թէ մի սրտակեց ընկերուհի էլ գտնուի: Ո՞վ իմանայ թէ ինչո՞ւ, միայն նրան այնպէս էր թւում, որ այդ ապագայ ընկերուհին անպատճառ բարձրահասակ, սիրուն կազմուածքով աղջիկ է լինելու, մեծ-մեծ, խոհուն ու խումար աչքերով, սև ու շքեղ վարսերով և դժգոյն երեսով...: Նա տիսուր կըժպատայ, քիչ կըխօսի. թէ նոր եկած միջոցին և թէ մնաս բարով ասելիս միշտ էլ

իւր ձեռն ամուր կըսեղմի. անշուշտ նա իւր կեանքի մէջ շատ տանջուած կըլինի բոլորովին իզուր տեղը. . . :

Վարժուհին երևակալութեամբ իւր համար ընկերուհի էր ստեղծում, բայց խկապէս՝ թէս անգիտակցօրէն, ինքն իրան էր պատկերացնում։ Եւ այդ նրա խառնուածքից էր. նա խկապէս չէր տանջւում այն բանից՝ որ իրան ոչ ոք էր սիրում, այլ աւելի տանջւում էր նրանից՝ որ մէկը չկար, որին ինքը սիրէր, որի մէջ նա այնքան պահանջ էր զգում։

Լուսամտի ձեղքերից թափանցող սառը քամին ուղղակի փչում էր նրա թիկնամէջին։ Դրանից նա սթափուեց։

Բոցավառուած չոր ճախերը ճարճատում էին և ոսկեղին անձրև սփուրմ դէսուդէն։ Այդ հաճելի տաքութիւնից ինքնամուացութեան մէջ ընկըմուած, նա բաւականութեամբ նայում էր կրակին, որի կայծերը մին այս ու այն կողմն էին ցրիւցրիւ գալիս, մին էլ յանկարծ իջնում, — վայր նստում։ Միքիչ լետոյ նա տեղից վեր կացաւ, բրդէ մեծ շալը ձգեց ուսերին, ծալքերը պատ տուեց իրանին, ապա դիմերով Զիկու-Նանոյին։

— Նանօ, գնանք ներքւ, տեսնենք ուսումնարանը, ասաց և մէկ էլ կանգ առաւ

վարանման մէջ։ Խեղճ աղջիկը մտաբերեց, թէ ինչպէս առաւօտեան գիւղամիջով անցնելիս բոլոր երեխաները, երիտասարդները, հետաքրքիր կանայք և համարեա ողջ գիւղի բնակչութիւնը իրան էին մտիկ տալիս. այդ պատճառով հարցրեց նանոյից.

— Արդեօք մի ուրիշ կողմնակի ճանապարհ չկամ ուսումնարան գնալու։  
— Ի՞նչպէս չէ, գիւղից դուրս, տների ետեր քիչ բանուկ մի նեղ ու ծուռ կածան կայ, — պատասխանեց նանօն և առաջ ընկաւ իւր շան հետ։ Օրիորդը նրան հետեւց։ Նանօն գնում էր և ձեռքերը տաքացնում կամ փշելով և կամ կոնատակերին պահելով. իսկ վարժուհին երկու ձեռքերով վէշերը լաւ հաւաքած, ոտի թաթերի վրայ զգուշութեամբ անցնում էր ջրալից փոսերի և սալլի անիւներից կազմուած խոր շաւիղների մէջերքով։ Վերջապէս հասան դպրոցին, որի անկիւնները դեռ ևս կանաչին էին տալիս խոնաւութիւնից ու կանաչ բորբոսից. դրանց վրայ չէր ազդել գործ գրած կիրը։ Տանուտէրը դպրոցումն էր. նա մտիկ էր տալիս, թէ ինչպէս են պատին ամրացում «պապիէ-մաշէից» շինած մեծ խաչելութիւնը, ինչպէս գրատախտակը դնում մէկ անկիւնում, իսկ միւսում էլ վարժուհու հա-

մար լատկացրած նստարանն ու սև սոճու վայտեայ սեղանը տեղաւորում։ Թէպէտ տանուտէրը՝ նկատեց վարժուհու ներս գալը, բայց նրա գիրուկ մարմինը տեղից իսկ չշարժուեց, այլ փոքրիկ շիբուխը ատամների արանքում դիմեց վարժուհուն։

— Տեսէք, կարծեմ որ պէտք է բաւական մնաք։

— Հապա երեխաների նստարաններն ուր են. ինչու չկան թանաքամաններ, թուղթ, աշխարհագրական քարտէզներ, հարկաւոր պատկերներ . . . :

— Տէր ողորմած Աստուած . . . միանքամից այդ բնչքան բան ասացիք։ Այդպիսով մենք կարող ենք ողջ գիրը քարուքանդ անել . . . : Ես կարծում եմ՝ առանց այդ բաների էլ կարելի է եօլա-գնալ։ Այն էլ բաւական է, որ ձեզ ընդունեցին, տեղաւորեցին. մէկ տեսէք, թէ ինչ հիանալի կացարան ենք տալիս դըպրոցի համար։

Օրիորդը զբթունքը կծեց. նա շալի տակ պահեց լուզմունքից գողացող ձեռքերը և յենուեց պատին։ Զէ՞ որ նրան զրկում էին ամենաանհրաժեշտ միջոցներից, որոնց օգնութեամբ նա կարող էր մեծ արդիւնք ցոլց տալ։ Տանուտէրը երբ համոզուեց, թէ ամեն

բան իւր տեղն է ու էլ պակաս բան չկայ, նորից գիմեց վարժուհուն՝ կարծես սկսած խօսքը շարունակելով։

— Լսեցէք՝ ինչ եմ ասում. գուլպայ գործել և սրբազն պատմութիւն, այսինքն՝ կրօն կըսովորեցնէք. ձեզանից միայն այդքանն ենք պահանջում։ Իսկ գրել-կարդալուն այնքան էլ գլուխ դնել հարկաւոր չէ։

Այդ ասաց տանուտէրն ու գնաց։ Վարժուհին աչքերով հետեւեց լամրաքայլ հեռացող գեղաւագին և մնաց ապշած. սակայն նա չյուսահատուեց, այլ հաստատապէս մըտքին գրեց իւր ստանձնած պարտականութիւնը՝ ինչքան որ հնար է, անթերի կտտարել։

Օրիորդը նստեց, ճիշդն ասած՝ համարեալնկաւ իւր համար նշանակած նստարանի վրըրայ և ձեռքերը գրեց սեղանին, որից գեռ ևս գեղի հոտ էր գալիս . . . : Ահա այստեղ, այս միւսնոյն տեղում, շրջապատուած աղմկարար երեխաների խմբով, ինքը կ'անցկացնի մի տարի, երկու տարի, կամ ով գիտէ, կտրելի է նաև երեք . . . նոյն իսկ իւր ամբողջ կեանքը, ուր մեծ քաղաքների արձագանքն անդամ չի համնելու իրան։ Սակայն իրան բնչ այդ մեծ քաղաքները, ուր բացի ծնողների թանկագին աճիւնից, մի հատիկ կենդանի շունչ

չունի: Նա մի մտերիմ, կամ մի հատ սըր-  
տացաւ բարեկամ չի ունեցել. գոնէ մէկը չի հո-  
գացել իւր մասին, ինչպէս և ինքը չի հոգա-  
ցել ոչ ոքի մասին: Նա իւր ամբողջ մատաղ  
կեանքն անց է կացրել հանապազ այն սև  
միտքն ունենալով, թէ գուցէ վաղը զըկուի  
նաև այն մի կտոր հացից, որ ունի այսօր: Եւ  
մէկ էլ յանկարծ սաստիկ վիրաւորական թը-  
ւաց նրան, երբ մտածեց որ ինքը պէտք է  
մեռնի մեռ-մեռակ և թաղուի ողորմու-  
թեամբ. չի լինելու մէկը, որ գոնէ մի կա-  
թիլ արտասուք թափէ իւր վրայ, չի գտնուե-  
լու մի հոգի՝ որ ծաղիկներ սփռէ իւր հողա-  
կոյտի վրայ: Այդ մտքերի ագրեցութեան տակ  
նոյն րոպէին նրան աւելի երկիւդ էր ներշըն-  
չում մերկ գերեզմանի սարսափը, քան կենսա-  
կան ծանը հոգսերը: Եւ որպէսզի ազատ ըն-  
թացք չտար իւր այդ զգացմունքին, որ խեղ-  
դում էր նրան, նա շտապով մօտեցաւ լուսա-  
մտին, որի առաջ տարածւում էր պարսպա-  
պատ բանջարանոցը: Այդտեղից երևում էին  
գիւղի թխացած շէնքերը, որոնք ձգւում էին  
մինչև բլրի մօտերքը, երևում էին մոխրին տը-  
ւող ժայռերը, ամբողջ հեռաստանը, որ կորչում  
էր երևացող թանձը մշուշի մէջ:

Չիկունանօն կուչ եկած նստել էր ան-

կիւնում, ինքնաբաւական կերպով զոյում  
իւր շանը և տարօրինակ խօսքեր շշնջում նը-  
րան, որոնց լսում էր հաւատարիմ անասունը  
աչքերը ճալճպացնելով ու պոչը բուլդի-բուլդի  
անելով, որպէս թէ հասկանում էր տիրոջ  
ասածները:

Տուն վերադառնալով վարժուհին պանդո-  
կապետուհուն տեսաւ նստած ուրախ վառուող  
բուխարու առաջ:

— Այսօր շարունակ քեզ վրայ էի մտա-  
ծում, օրիորդ, խօսեց պառաւը. հիմա եկել ես  
ասեմ, որ քեզ համար ճաշը ես կըպատ-  
րաստեմ: Զէ որ դու ոչ մի հատ աման չունիս:  
Ի՞նչ կ'ասեն, հը:

Օրիորդը նրա ձեռը սեղմելով ասաց.

— Ենորհակալ եմ. ի՞նչպէս բարի էք դուք:

— Այստեղ չար ու բարի լինելու բան  
չկայ, հոգիս... Զէ որ ես իմ օգտի համար պի-  
տի աշխատեմ. . . : Քեզ արդէն ասացի, որ  
դու ինձ շատ դիւր եկար. հէնց այն երեկոյ  
դու ինձ դիւր եկար, երբ իմ պանդոկում ի-  
ջար: Ես մի աղջիկ ունէի, նա ևս քեզ նման  
ճերմակ էր. միայն նա շատ բարակ էր,  
այնպէս բարակ, որ ապակու նման թափան-  
ցիկ էր: Իմ ամբողջ հոգիս էր նա, բայց Աս-  
տուած ձեռքիցս առաւ նրան . . . :

Եւ պառաւն սկսեց դառնապէս լաց լինել։  
— Ինձ այնպէս է թւում, որ ինչ որ լաւ  
բան եմ անում, նրա համար եմ անում . . . :  
Հիւանդ պառկած միջոցին երբ մի-մի խնգամ  
ուզող էր գալիս լուսամտի տակ ողորմութիւն  
խնդրում, իմ աղունակս, — ախ, մեռնեմ նրա  
խոշոր-խոշոր խումար աչերին, — իսկոյն ձայն  
էր տալիս. «Մայրիկ ջան, մի քան տուր խեղճ  
ուզողին»։ Հիմա նա երկնքումն է. և շատ  
կարելի է այժմ մեզի՞ն նայում: Եթէ նա կեն-  
դանի լինէր, նա ևս քեզ ծառայութիւն  
կ'անէր։

Վարժուհին մինչի հոգու խորքը յու-  
զուած էր. նա խօսք չէր գտնում միխթա-  
րելու այդ ըստ երեսութիւն կոշտ բայց մայ-  
րական խանդակաթ սիրով տոչորուող կնոջը։  
Պառաւը իւր հաստ գոգնոցով սրբեց աչքերը  
և նկատելով վարժուհու սաստիկ յուզուած  
դրութիւնը, էլի ինքն սկսեց նրան միխթա-  
րել։ Աթոռից վեր կացաւ, մօտեցաւ նրան և  
ձեռը դնելով ուսին, որքան կարող էր ա-  
սաց քնքշաբար։

— Մի վհատուիր, սիրելի աղջիկս, աշխա-  
տիր քաջ լինել, որպէսզի կարողանաս դիմա-  
դրել շատ արգելքների։ Թէպէտ մեր գիւղացիք-  
էլի նախկին կոպիտ և բոի մարդիկն են, բայց

էլ առաջուայ նման ոչ բարեպաշտ են և ոչ  
առաքինի. նրանք փորձառու ծերերին այլևս  
չեն լսում. . . : Ակա այդ է պատճառը որ  
բոլորովին օտար մարդիկ են տիրութիւն ա-  
նում այստեղ . . . : Բայց ես շարունակում եմ էլի  
հին ձեի ապրել . . . և միշտ էլ իմ մուրազա-  
չոր Մենիիս մասին եմ մտածում . . . : Դէ մնաս  
բարով, զաւակս. թո՛ղ Աստծու աջն ու խոչը  
վրադ լինի։

Պառաւը գնաց, սեղանի վրայ թողնելով  
երեք պուտուկ՝ իրանց խփերով, կերակուր  
եփելու համար, երեք էլ երեսսրբիչ։

Իրիկնադէմին Զիկու. Նանօն դռները փա-  
կեց և նոյնպէս գնաց։

Երեկոյեան զանգի մեղմ ու երկարահնչիւն  
զօղանցիւնը հանդիսաւոր կերպով և խղաղու-  
թեամբ տարածւում էր ողջ գիւղի վրայ և  
մարդկանց աղօթելու հրաւիրում։

¶

**Ա**մեն օր, առաւօտեան ժամը ութին,  
վարժուհին գնում էր ուսումնարան, որի դըռ-  
ների մօտ արդէն հաւաքուած սպասելիս էին  
լինում միքանի աղջիկ՝ վառարանի համար ճախ  
ու խշուր կոնատակներին։ Դասարան մըտ-

նելուն պէս վարժուհին իսկոյն բաց էր ա-  
նում լուսամուտը. քանի մի ըոպէով, որպէսզի  
սենեակի ծանր օդը մաքրուի, թարմանալ,  
յետոյ փակում էր, նստում աթոռակի վրայ  
և ամենայն ուշադրութեամբ նայում, թէ  
ինչպէս են կրակը վառում: Իւրաքանչիւր  
աշակերտուհի պարտաւոր էր իւր բաժին վառե-  
լիքը հետը բերել. ո՞րը կտրտած քանիմի փալտ,  
ո՞րը ճախ, կամ խշուր, ո՞րը ծառի կեղև, ո՞րն  
էլ արևածաղկի չորացած ցօղուններ: Սենեա-  
կի մէջ դրուած էին աթոռներ, աթոռակներ  
և զանազան տեսակ նստարաններ. . . . Այդ ա-  
մենը երեխէքն էին բերել իրանց համար:  
Երբ վառարանը սկսում էր ուրախ-ուրախ վա-  
ռուել, աշակերտուհիք հետզհետէ գնում նըս-  
տում էին իրանց նստարանների վրայ: Յրտից  
ամենի երեսն ու ձեռքերը կարմրատակած էին  
լինում: Նրանցից միքանիսը գեռ էլի ծա-  
մում էին իրանց առաւօտեան ուտելիքը, իսկ  
միւսներն իրանց բաժինը պահում գրան-  
ներում, որոնք նկատւում էին գոգնոցների  
տակից: Աշակերտուհիք աղաղակում էին, աղ-  
մուկ բարձրացնում, ոտներով թղթղկացնում  
լատակին, աթոռները շարժում և կամ իրար  
բոթբոթում: Այդ բոլոր միախառնուած աղմու-  
կից մարդու գլուխ էր պտոյտ գալիս:

Պատահում էր որ գեղջկուհիներից մինը  
իւր գործին գնալիս, շտապով մտնում էր դա-  
սատուն և ծծի մանուկը յանձնում ալդտեղ  
սովորող մեծ աղջկան, որ նա պահի: Կամ  
ներս էր գալիս ածխագործը, որի ճանապարհի  
վրայ էր դպրոցը, և առանց ալլայլութեան  
վարժուհուն յանձնում կեղտի մէջ կորած իւր  
փոքրիկ որդուն: Երեխան թնգթնգում էր որ  
լաց լինի, սակայն հայրը թողնում գնում էր,  
անիծելով իւր ճակատագերը, որովհետև ա-  
մուսինը վախճանուելով՝ իւր վզին էր թողել  
մատաղ երեխաներին:

Վարժուհին ուրիշ ճար չունէր, նա պէտք  
է սրտապնդէր ու համաձայնէր և հետն էլ  
իւր ստանձնած գործը քաջաբար գլուխ հա-  
նէր: Առհասարակ ամենքն էլ հասկացնում  
էին նրան, որ հասարակութիւնն իզուր տեղը  
չէ նրան ոռնիկ վճարում. ուստի գիւղացինե-  
րից ամեն մինն իրաւունք էր համարում վար-  
ժուհու ժամանակը իւր ուղածին պէս գոր-  
ծադրել: Ահա այդ էր պատճառը որ իրանց  
ընդհանուր դայեակի պարտականութիւնը ևս  
նրա վրայ էին բարձում:

Օրիորդն աշխատում էր դպրոցում տի-  
րող աղմուկն ու աղաղակը դադարացնել.  
Երբ խաղաղութիւն էր տիրում, աղօթք էր

ասել տալիս և պատուիրում հանգիստ մնալ,  
որ դասն սկսի. և նա սկսում էր այբուբէնն  
ուսուցանել. ամենից առաջ ձախաւոր տաշ  
ռերը, յետոյ բաղաձայնները ևայլն ըստ կար-  
գին: Աշակերտուհիք չէին կարողանում վար-  
ժուհու ասածները շուտ ըմբռնել. և վար-  
ժուհին էլ նոր սկսեց հասկանալ, որ ուսու-  
ցանելն ու երեխայ դաստիարակելը ևս մի  
արհեստ է, որ իրան չեն սովորացրել,  
որպէսզի ինքն այժմ թէ հեշտ կերպով ուսու-  
ցանէր աշակերտուհիներին և թէ հետները  
վարուել իմանար:

Եւ վարժուհին ինքը իւր անկարութեան  
վրայ էր բարկանում: Փախչում էր նրանից  
նաև բարոյական վերջին նեցուկը, այն է՝ հա-  
սարակութեան օգուտ բերելու յոյսը: Զկար  
գոնէ մէկը, որի հետ կարողանար խորհրդակ-  
ցել այդ բաների մասին:

Աշակերտուհիներից աւելի հասակաւոր-  
ները համարձակ և համարեա ծաղրով նայում  
էին ուղիղ նրա աչքերին. «մի տեսէք ի՞նչ  
է անում», ասում էին նրանք քթերի տակին:  
Իսկ փոքրիկներն իսկոյն իրանց գոռոցն էին  
կցում, հէնց որ վարժուհին հետները միքիչ  
խիստ, կամ լուրջ կերպով էր վարում:  
Խեղճ աղջիկն զգում էր որ ներքին

յուզմունքից քիչ է մնում խեղդուի. ուստի նա  
աշխատում էր իրան պահել և անտարբեր ե-  
րևալ, բայց այդ ամենեւին չէր յաջողւում  
նրան: Կուրծքն արդէն սկսել էր ցաւել,  
երբեմն չոր հաղն արգելք էր լինում նրան  
պարապելու:

Տէ՛ր Աստուած, աւելի լաւ չէ մեռնել:  
Օրական երկու անգամ գնում էր ուսում-  
նարան և երկու անգամ էլ վերադառնում  
տուն: Նրա փոքրիկ ոտները թաղւում էին  
ձնի մէջ, կամ սառը ցեխի մէջ խրւում, իսկ  
խեղճ աղջիկն ուրիշ ոտնաման չունէր բացի  
հագինից: Լեռնալին խիստ ու սառը քամին  
ծեծում էր նրա երեսը, փրփռացնում հա-  
գուստը և ողջ մարմինը սառեցնում: Օրիոր-  
դը նախանձով էր մտիկ տալիս ուրախ ծտե-  
րի վրայ, որոնք խմբերով նստած տանիքնե-  
րին՝ ճռուղում էին աշխուժութեամբ, խմբո-  
վին էլ թռչում, վէր էին գալիս ձնի վրայ  
և կամ տերևազուրկ ծառերի շուրջը պտուտ-  
ներ անում:

Երեկոյեաները վարժուհին նստում էր  
բուխարու առաջ և կարում, գործում,  
կամ մի բան կարգում: Բայց յաճախ միլը,  
ասեղը, կամ գիրքը, նրա կամքի հակառակ,  
ձեռքից վայր էին ընկնում ծնկների վրալ և

սեւսե մտքերը, որ ծնունդ էին առնում նրա հէք գլխի մէջ, անյունութեան մէջ էին ձգում նրան և սարսափեցնում։ Լեռների կիրճերի մէջ ոռնացող հողմը փչում էր ուժգնութեամբ և ձնի տարափները բերում խփում լուսամտի ապակիներին. սաստիկ քամուց տերեազուրկ ծառերի ճղները շրթկալէ դիպջում էին բանջարանոցի ցանկապատին և խեղճ աղջկալ վրայ սարսափ բերում։

Նա ամբողջովին սարսուաց ալդ գիշերային ձայներից, և որպէսզի ալդ անախորժ տպաւորութիւնից ազատուի, նա վերկացաւ և բուխարու մէջ վառուղ փայտերն իրար գցեց, որ աւելի լաւ վառուեն։

Նա միառմի մտաբերում էր օրուան անցած-դարձածը. լիշում էր աշակերտուհիների անունները, նրանց հետ ունեցած խօսակցութիւնը, իւր անարդիւնք ուսուցումը, ճանապարհին իրան հանդիպող մարդկանց գէմքերը։ Եւ ալդ բոլոր լիշութիւնների մէջ օրիորդի համար ամենից անախորժն ու անհաճելին սրճարանի մշտական յաճախորդ այն հինգ ստահակ տղերանց մասին լիշածն էր. սակայն նա ստիպուած էր միշտ էլ ալդ սրճարանի մօտով գնալ-գնալ, քանի որ միակ ճանապարհն այդտեղով էր անցնում։ Անպի-

տան ստահակները ամեն օր շարունակ նայում էին օրիորդի վրայ և շատ անգամ էլ ծաղրում։ Մանաւանդ նրանցից մինը՝ որ միշտ սրճարանում վէր ընկած էր լինում, գալիս էր և յատկապէս վարժուհուն սպասում։ Դա մի շշչոտ, անդուր ու անալի երիտասարդ էր։ Եւ միայն Զիկունանոյին էր օրիորդը հաճութեամբ մտաբերում։ Ալդ արգահատելի հաշմանդամը, որ միշտ իւր շունը հետն էր ման ածում, ամեն օր գալիս էր վարժուհու համար զուր կրում, փայտ բերում, իսկ վարձատրութեան մասին լսել անգամ չէր ուզում։ Երբ սենեակը սրբում պրծնում էր, բուխարին էլ վառում, միքիչ կանգնում էր, իւր շի աչքերով նայում վարժուհուն և առանց մի խօսք ասելու հեռանում։

Բարի պանդոկապետուհին իսկի մտքից չէր հանում վարժուհուն. նրան «աղջիկ-ջան» էր ասում և երդում էր որ ինքը պատրաստ է իւր գլուխը մահու տալ նրա համար։ Բայց միւս գեղջկուհիք այնքան էլ լաւ աչքով չէին նայում վարժուհուն։ Իսկ գիւղի ազնուական համարուած և հարուստ կանալք, որոնք կատարեալ իշխանական կեանք էին վարում, ուղղակի արհամարհում էին նրան. որովհետեւ վարժուհին նրանց չէր ալցելել և

այժմ էլ չեր աշխատում նրանց հովանաւորութիւնը ձեռք բերել:

Կիւրակի օրերը պատարագին ամենից շուտ եկողը և ամենից էլ ուշ գնացողը վարժուհին էր լինում, որպէսզի իրան մտիկ տուող չլինի: Եւ սակայն չնայած այդ զգուշութիւններին, նա իւր մուլթ անկիւնում կանգնած տեղից տեսնում և զգում էր, թէ ինչպիսի բժախնդիր և անբարեցակամ հայեացքներ են յառուած իւր վրայ, որոնք կարծես ասելիս լինէին.—«Հպարտ, գոռող անպետան, արժան չհամարեցիր մեզ այցելութեան դալ, հիմա էլ չես կամենում մեզ ճանաչել. դէ ուրեմն սպասիր, կըտեսնենք...»:

Վարժուհու թէ անհաղորդ ու զգուշաւոր ընաւորութիւնը, թէ այն՝ որ նրան նահանգական իշխանութիւններն էին հաստատել այդ պաշտօնի մէջ, և այն էլ հակառակ գիւղի առաջաւորների կամքին, հետզիետէ պատճառ գարձան ընդհանուր հակազրութեան, որ երկաթի օղի նման ամուր ու պինդ բռնել էր խեղճ աղջկան: Ամեն տեղ հետեւում էին նրան. լրտեսում էին նրա ամեն մի քայլը, արտասանած իւրաքանչիւր խօսքը, և հետեւում ու լրտեսում էին այն չարամիտ ու նենդ հետաքրքրութեամբ, որ անպատճառ կամե-

նում է մի որեւէ վատ բան երևան հանել իւր հետազօտած առարկայի մէջ: Այլևս ինչ ասել կ'ուզի որ այդ տեսակ ստոր վափագ ունեցողների համար մի ամենաչնչին պատահմունք, կամ զուգագիպութիւն բաւական էր լինում, որ ամենազգուելի բամբասանքներ հնարէին ու տարածէին:

Վարժուհին մի անգամ մտքի ետևից ընկած՝ երկար կանգնած մնաց իւր սենեակի լուսամտի առաջ. հէնց այդ միջոցին նրա տան մօտից մի ձիաւոր երիտասարդ անցաւ: Խսկոյն կարծիք տարան, որ դա նրա սիրահարն էր, որին սպասում էր լուսամտի առաջ, որպէսզի կարողանայ նշանացի ձեերով ժամադիր լինելու համար պայմանաւորուել: Մի անգամ ևս գառնազին լաց լինելիս վրայ հասան, և էլի անմիջապէս վճռեցին, թէ նա այդպէս արտասւում է իւր հեռաւոր սիրեցեալի համար: Յետոյ էլ անխղճօրէն սկսեցին նրան մեղադրել բողոքականութեան մէջ. և այդ այն պատճառով, որ ինչ գիւղն էր եկել, ոչ մէկ անգամ չէր ճաշակուել, բացի գրանից իրանց աչքով՝ էլ տեսել էին նրան մի ուրբաթ օր պասը լուծելիս:

Աւելացրէք դրանց վրայ նաև տեղական երէցի և զեղափաճառի տարածած ստայօդ

լուրերը, որոնք հիմնուած էին լինում այն տեղեկութիւնների վրայ, որ գրում էին՝ մէկի աղջիկը և միւսի քեռորդին, որոնց հետ միւսնոյն դպրոցում էր ուսել վարժուհին։ Այդ աղջկանց չար նպատակով գրած նամակները կրակի վրայ իւղ էին աւելացնում։ Քահանան ու գեղավաճառը ամենքին պատմում էին վարժուհու մասին՝ թէ նրան այն պատճառով են այդպէս շուտով պաշտօն տուել գիւղում, որպէսզի նրա ներկայութիւնից ազատեն ուսումնարանը, որպէս թէ վարժուհին անամօթի մէկն է եղել, որ նա ուսուցիչներից միքանիսին սիրահարական նամակներ է գրել և սմեն Աստծու օր լուսամուտներից տոմսակներ է վայր նետելիս եղել իւր սիրահարներին. թէ նրան այն պատճառով են հասունութեան վըկայական տուել, որ նա մենակ գնալ գալ է ունեցել երեք ամուրի ուսուցիչների կացարանները, որ նա ոչ Աստծուն է հաւատում և ոչ նրան բարեխօսող սրբերին. իսկ կրօնի մասին այնպիսի բաներ է ասում, որ լսողի գըլի մազերը բիզ-բիզ են կանգնում. . . :

Թէ այդ և թէ դրանց նման շատ ստութիւններ՝ տէրտէրն ու գեղավաճառը առանձին բաւականութեամբ էին պատմում ամենքին։ Ինչ ասել կ'ուզի որ այդ բոլոր բամբա-

սանքների մասին խօսում էին նաև սրճարաններում, պանդոկներում ու փողոցներում։ Ծաղը համար «բանաստեղծուհի» անունը կպցըին օրիորդին. ապա սկսեցին բազմաթիւ անստորագիր նամակներ գրել նրան, որոնց մէջ այնպէս էին հաւատացնում նամակագիրները, որպէս թէ իրանց լայտնի է նրա ամբողջ անցեալը, նրա արած վատ-վատ բաները։ Հետեւապէս նրան կըվռնդեն, եթէ ինքը իւր ազատ կամքով վաղօրօք չէռուանայ։

Դժբաղդ աղջիկը տանջւում էր. նա միանգամայն չէր կարողանում հասկանալ, թէ որտեղից են հաւաքում այդ անխիզմ ստերն ու բամբասանքները։ Բայց և այնպէս, ինչքան որ կարողանում էր, էլի շարունակ աշխատում էր, որպէսզի կարողանայ իւր ստանձնած պարտականութիւններն անթերի կատարել առանց մէկին մի բան ասելու։ Եւչմիայն մի անգամ իւր լքցուած սիրտը բաց խրաւ պանդոկապետուհուն, երբ նա եկել էր իրան տեսութեան։

Պառաւն այդ բանից այն աստիճան վըրդովուեց, որ տուն վերադառնալիս՝ հէնց ում վրայ էլ որ կասկած տարաւ թէ անբարեացակամ պիտի լինի նդէպի իւր «աղջիկ-ջանը», աջ ու ձախ ամեն հանդիպողի հայի հոյեց. իսկ սրճարանի

մշտական լաճախորդ երիտասարդներին հօ՛ իստակ ներկեց։ Պառաւի այդ վարմունքն աւելի ևս բորբոքեց կը բերը. դրանից լետոյ վարժուհուն համարեա անցնել չէին թողնում. ուղղակի նրա երեսին անպատկառ խօսքեր էին շպրտում և ծաղրում։

Երբ ամիսը լրացաւ, օրիորդը Զիկունանոյին ուղարկեց շինական վարչութիւն՝ ոռնիկն ստանալու. բայց գանձապահը չտուեց, այլ պատուիրեց ասելու՝ թէ «թող օրիորդն ինքը գայ ստանայ»։ Եւ օրիորդը գնաց։ Դանձապահը վերոյիշեալ չեցու ու անամօթ սրիկան էր, որ սրճատան մօտ սպասում էր վարժուհուն ամեն օր։ Թշուառականը դեռ սկսեց զանազան հաճոյախոսութիւններ անել օրիորդին, ապա խնդրեց որ նստի. հարցուփորձ արաւ օրիորդի առաջութեան, նրա հայրենիքի կլիմայի, նրա ընտանիքի մասին, տկնյալտնի կերպով խօսակցութիւնը դիտմամբ ծրծռացնելով։ Վարժուհին՝ ըստ հնաւորութեան միայն այն կամ ոչ էր պատասխանում։ Սակայն անհամբերութիւնը տիրեց խեղճ աղջկան. նա սկսեց անհանգստանալ, որ մի անձանօթ տղամարդու հետ այդպէս երես առ երես զբոյցի էր ըըռնուել։ Դանձապահը խիստ պերճաբան դարձուածքներով թոյլտութիւն խնդրեց վար-

ժուհուց՝ գնալգալ ունենալ նրա մօտ, որովհետև օրիորդն այնպէս սիրուն ու գողտրիկ արարած է, որ ինքը միանգամայն սքանչացած է նրա սիրունութեան վրայ։

Իարկութիւնից խեղճ աղջկայ գոյնը թռել էր, նա ոչինչ չէր պատասխանում։ Այն ժամանակ ստահակ անպիտանը մօտեցաւ նրան, գրկեց մէջքեց և համբուրեց։

Լսելի եղաւ ապտակի՞ցը պալոց։ Գերմարդկային ճիգ թափելով նա ազատեց իրան գիւղական Դօն. Ժուանի ճիրաններից և դուրս վագեց փողոց։

Կըտեսնես թէ քեզ քաղցած չսպանեմ, աղքատ-ղադօ, աղաղակեց նրա ետկից գանձապահին։

Եւ ճշմարիտ, այն անպիտանը չտուեց խեղճ աղջկայ ոռնիկը, միշտ էլ ասելով՝ թէ «գանձարանում պատրաստի դրամ չկայ, վազն եկէք»։

Եւ այդպէս ամեն Աստծու օր։

Վարժուհին խնդրեց տանուտէրին, ապա դիմեց վերատեսչին, վերջապէս գլեց նաև նահանգապետին, բայց ոչ մի տեղից օգնութիւն չստացաւ. մինչև անգամ չպատասխանեցին նրան։

Միայն պանդոկապետուհին էր որ նրան

չէր լքանում։ Սակայն օրիորդն զգում էր նուաստանալու դառն զգացմունքը. վասնզի միջոց չունենալով իւր պարտքը հատուցանելու պառաւին, նա կերակրում էր ի սէր հանգուցեալ Մենիի։ Բացի դրանից նա այլ հոգսեր ևս ունէր. խեղճի կօշիկները բոլորովովին ձեռքից գնացել էին, շորերն էլ մաշուել։ Նրա հաւատարիմ բարեկամը—բրդէ մեծ շալն անգամ շատ մաշուելուց սկսել էր, կարծես, բարակել։ Այն ինչ անհրաժեշտ էր օրը երկու անգամ տանից դուրս գնալ ամեն տեսակ եղանակին։

**Հէք աղջիկը բոլորովին ինքն իրան կորցրել էր։**

Զիկու-նանօն միշտ գնում էր անտառ և վարժուհու համար չոր խշուր-մշուր ժողովում և աշխատում էր այնպիսի ժամանակ գալ տուն, երբ օրիորդը տանը՝ չէր լինում։ Իսկ պատահած միջոցին օրիորդին այնպէս էր թըւում, թէ նանոյի շիլ աչքերում կարեկցութեան փայլ է նշմարում դէպի ինքը։

Թշուառական գանձապահի մտքից չէր գնում կերած ապտակը. նա բաւական չհամարելով վարժուհուն ոռմիկ չտալը, այլև ամեն երեկոյ պանդոկից դուն գնալիս, որ սովորաբար լաւ կոնծած էր լինում, զզուելի

բովանդակութեամբ ոտանսաւորներ էր երգում խոպոտ ձայնով նրա լուսամտի տակ, սառցի ծիւլիւներ շպրտում դէպի լուսամուտը և կամ առանց այլեալութեան սկսում էր ամուր-ամուր բաղիսել դուռը։

Դժբաղդ աղջիկն զգում էր, թէ մինչի որ աստիճան ստորացնում են իրան. սակայն ձեռքիցն ի՞նչ էր գալիս, որ կարողանար անել։ Ամեն անգամ ձեռքերը վայր թողնելով ծնկների վրայ, գլուխը խոնարհում էր և շշնջում. «Մայր իմ, մայր իմ, ինչո՞ւ ինձ մենակ թողիր», և նա սրտանց մահ էր աղերսում Աստուածանից։

Մի երեկոյ էլ անամօթ գանձապահի սրիկայական երգն ընդհատուեց շան կատաղի հաջիւնով։ Ինչպէս երևում էր, շունը յարձակուել էր անպիտանի վրայ, որովհետեւ հաջոցից լետոյ օրիորդը լսեց թշուառականի ճիչը և շտապ հեռացող քայլերը։ Վարժուհին գըլխի ընկաւ որ անպիտանին փախցնողը Զիկու-նանոյի շունն էր։

—Երէկ երեկոյ գու ի՞նչ էիր անում իմ դուանը, —միւս օրը հարցըեց նանոյին օրիորդը։

—Իսկի ոչինչ, ի՞նչ պիտի անէի, նստել էի և աստղերին էի նայում։

Եւ նա մտիկ տուեց օրիորդին իւր շիլ

աչքերով, յետոյ ձեռքը տառաւ՝ և իւր ցնցոտիների տակից դուրս հանեց մի մեծ դանակ:

— Ա՛յ, եթէ կրկին գալ, — ասաց հաշմանդամը և ձեռքի դանակը օդի մէջ շարժեց այնպէս, որպէս թէ մէկին սրախողինող է անում:

Օրիորդի գոյնը թուաւ:

— Ոչ, ոչ, նանո. խնդրում եմ ալդպէս բան չանես, սարսափահար բացագանչեց օրիորդը:

Նանօն երեսը շրջեց ամօթից, որ օրիորդին վախացրեց և թաքցրեց դանակը:

— Ենորհակալ եմ քեզանից, նանո, — նորից խօսեց օրիորդը. — դու բարի սիրտ ունիս:

Նանօն տարուբերեց գլուխը և լուռ դուրս գնաց:

Սնցաւ քանմի երեկոյ. երգը չկրկնուեց:

Մինչ այս մինչ այն, ձմեռն օր օրի վրայ աւելի ու աւելի էր սաստկանում: Մէկ օր ալճպէս հաստ ձիւն նստեց, որ ամենքն էլ ստիպուած եղան տանը մնալ. ճանապարհներն անանցանելի դարձան: Մի գիշեր էլ աղքատ գիւղացիներից մէկին սառած գտան իւր խրճթի մէջ:

Վարժուհու կացարանն ալճպէս ցուրտ էր, որ գիշերները նրա քունը չէր տանում, այլ մինչի կէս գիշեր մնում էր նստած կրա-

կի առաջ, մանաւանդ որ ձեռքի գործն էլ շտապով էր: Խեղճ աղջիկը մնալով անոռնիկ, աշխատում էր միքեւ դրամ ձեռք բերել՝ զանազան բաներ — շապիկներ, կամ թաշկինակների եղբներ կարելով և կամ գուլպայ գործելով, ու այդպիսով օրական մօտ 5—6 կոպէկ էր ստանում և դրանով մի կերպ եօլագնում, սպասելով նահանգապետի կարգադրութեան, որին խնդիր էր ուղարկել ռոճիկ չստանալու համար:

Այդպէս անցան օրեր ու շաբաթներ: Եկաւ և Ծնունդը:

Այդ հանդիսաւոր տօնին էլ չմոռացաւ նրան պանդոկապետուհին. թաթախման գիշերը նրան տուն տարաւ և սեղան նստացրեց հէնց այնտեղ, ուր երբեմն նստացնում էր իւր վաղաթառամ Մենիին: Պառաւին մեծ բաւականութիւն էր պատճառում այդ. ներքին հաճոյքից փայլում էին նրա աչքերը:

— Ահա ինձ հետ է նաև իմ սիրելի աղջիկը, կարծես նա գերեզմանից ելնելով՝ եկել է տօնին, — ասում էր պառաւը և նրա ձայնի մէջ մի տեսակ բաւականութիւն ստացած կըսկիծ էր հնչում, ու վերջն աւելցնում.

— Աչքին լոյս, կեր, մի քաշուիլ:

Եւ նա ստիպում էր օրիորդին շատ ու-

տել, աշխատում էր ուրախացնել, սիրտ տալ ու քաջալերել նրան: Թէև վարժուհու խիստ դժուարն էր գալիս, որ ինքը հանգուցեալի տեղն էր բռնել, բայց և այնպէս ինքն էլ իւր կողմից էր աշխատում որդեսէր պառաւի հոգու լաւ տրամադրութիւնը վառ պահել:

— Տես, հոգիս, չմոռանաս, նոր տարուն էլ պիտի գաս ինձ մօտ, — ճանապարհ ձգելիս ասաց պառաւը. — անպատճառ գաս հա...:

Եւ օրիորդը նոր տարուն էլ գնաց պառաւի մօտ:

## Ե

**Ա**նցաւ կրկին մի ամիս. և թէպէտ սիրային երգերը այլևս չէին կրկնում, սակայն ոռծիկ էլ չէին տալիս:

Մի գիշեր էլ վարժուհին նստած էր բուխարու առաջ, որի մէջ կրակն ուրախ-ուրախ վառում էր. բարոյապէս և փիզիքապէս յոգնած լինելով, հէք աղջկայ քունը տարաւ: Եւ մէկ էլ յանկարծ զարթեց լուսամտի բացուելու ձայնից և յետ նայեց: Նրա գիմաց կանգնած էր փուչ գանձապահը՝ վիթխարի հասակով, դժգուն, կնճոռտուած դէմքով և Ս. ըգոսի

պէս դաժան և վաւաշոտ աչքերով մի տղամարդ: Յանկարծակի բռնուած թուչնակի նման վարժուհին թրփրտաց և վեր թռաւ աթոռից:

Մի ըոպէ նրանք կանգնած մնացին իրար գիմաց՝ առանց մի բառ արտասանելու:

— Հիմա, օրիորդ, — առաջինը խօսեց կամ աւելի ճիշդն ասած՝ օձի պէս շշաց Դօն-ֆուանը, — ոչ մի արարած քեզ չի ազատիլ իմ ձեռքից:

Բաց մնացած լուսամտից Ճիշնը ներս էր թափւում և սառը քամի վչում: Գանձապահը փակեց լուսամուտը, փեղկերը վրայ բերեց ու կրկին եկաւ օրիորդի մօտ և թերերը պարզեց որ բռնի:

— Հեռու, թշուառական, — արդար ցամամբ աղաղակեց օրիորդը, — ապա եթէ ոչ օգնութիւն կըպուամ:

Սակայն անպիտանն ուշագրութիւն իսկ չդարձրեց նրա խօսքերի վրայ. նա մէկ քայլ էլի առաջացաւ, ձեռքի մէկով գրկեց նրա իրանը, իսկ միւսով էլ փակեց բերանը...:

Դժբաղդ աղջիկը վիրաւոր թուչնակի նըման թրթուում ու թրփրտում էր սրիկալի զզուելի համբոյներից, սակայն չէր կարողանում ազատուել նրա ձեռքից: Բայց և այն-

պէս նրան յաջողուեց իւր բոլոր ուժով ճիշ  
արձակել։ Հեք աղջիկն զգում էր իւր ուժա-  
սպառ լինելը, զգում էր որ եթէ այդ անհա-  
ւասար կոփւը միքանի րոպէ ևս շարունա-  
կուի, ինքը գիտակցութիւնը պիտի կորցնի...։

Հէնց այդ իսկ րոպէին անլսելի կերպով  
դուռը բացուեց և նանօն մէկ ոստիւնով կանգ  
առաւ նրանց առջև։ Մէկ ակնթարթում նրա  
մեծ դանակը շողջողաց անպիտանի աչքերի  
առաջ. իսկ ահագին շունը հնազանդուելով  
տիրոջ հրամանին, վրայ ընկաւ և հախուեց  
թշուառականի բուկը։

— Նուտ կորիր ալստեղից, — մոնչաց նա-  
նօն աչքերից կըակ ցայտելով, — եթէ ոչ ալս  
րոպէիս կաշիդ կըքերթեմ, ինչպէս գողին են  
անում։

Դանձապահը ձեռքից թողեց իւր զոհը։  
Տերոջ նշան տալուն պէս շունը ևս բաց թո-  
ղեց նրա բուկը։ Սրիկան քայլերն ուղղեց դէ-  
պի դուռը, շմէքի վրայ կանգ առաւ և չա-  
րամտութեամբ նայելով վարժուհուն ու նրա  
ազատարարին, մատը տարաւ բերանը և կծեց։

Տեղական սովորութեամբ մատը կծել՝  
նշանակում էր երդուել անպատճառ վրէժ-  
խնդիր լինելու։

Զիկու նանօն փեղկերի կոճակը գցեց,

դռան սողնակը դրեց, ապա եկաւ ուշա-  
թափ վարժուհու մօտ, մի կերպ ուշքի բերեց  
ու ինքը քաշուելով մի անկիւն՝ նստեց հանգիստ։

Դժբաղդ աղջիկը մեռելի գոյն էր ստա-  
ցել։ Աչքերը չուած, բիբերը լայնացած ու  
մազերը գզգզած՝ նա գլուխը գետին էր խո-  
նարհել և այդ դիրքով մնացել ընդարմացած։

— Զլինի թէ խելքը կորցրեց, անցաւ աղ-  
քատ տղայի մտքով։

Բայց քիչ-քիչ օրիորդն ինքն իրան գալով  
ուշաբերուեց և միքիչ հանգստացաւ։ Ապա  
նորէն երկիւղից դողալով՝ աղերսանօք դիմեց  
նանոյին։

— Նանօ ջան, ի սէր Աստուծոյ, ինձ  
մենակ մի թողնիր։

Նանօն վերկացաւ նստած անկիւնից, գը-  
նաց անկողինը հարթարեց և քնքշաբար բըռ-  
նեց օրիորդի թւեից, տարաւ նրան անկողին  
դրեց ու սկսեց այնպէս հոգալ նրա վրայ, ինչ-  
պէս մի բարի հիւանդապահ։

Լոյսը բացուելուն պէս նանօն վտղեց  
պանդոկ, յայտնեց օրիորդի դրութիւնը և եր-  
կուսով միասին գնացին ծերունի բժշկին,  
որ միայն չքաւորներին էր բժշկում ձրի, կամ  
համարեա թէ ձրի։ Այդ ծերունին՝ մի սրտա-  
փակ, ինքն իւր մէջ կենդրոնացած և մոալ

անձնաւորութիւն էր: Մի տարուայ մէջ, միմեանց ետևից, զրկուելով համարեա բոլոր զաւակներից և հողին յանձնելով սիրեցեալ ամուսնուն, նա ցանկացաւ աղմուկից իսպառ հեռու մնալ, ուստի տեղափոխուեց գիւղից բաւական հեռու ընկած մի քնակարան, ուր ապրում էր մեն-մենակ:

Ճանապարհին նանօն պատմեց բժշկին մանրամասն՝ ինչ որ պատահել էր:

Բժիշկը դալով ուշի ուշով քննեց հեւանդին:

— Դեղը շատ քիչ կ'օգնի ձեզ, — որքան կարող էր աշխատեց քաղցրաբար բացատրել բժիշկը. — ձեզ համար ամենալաւ դեղը. . . այստեղից հեռանալ, ուրիշ տեղ գնալն է. . . : Այստեղի օդը չափազանց խիստ է, նա շատ վնասներ կարող է պատճառել ձեզ:

— Գնալ ուրիշ տեղ. . . բայց ուր, յուսահատութեամբ բացագանչեց դժբաղդ աղջկը:

Ծերունին երկար միջոց մտքի ետևից նկաւ, ապա դեղ գրեց, զանազան պատուէրոներ տուեց և գնալիս ասաց.

— Եթէ ինձ թոյլ կըտաք, ես կըփորձեմ, կարելի է ինձ յաջողուի մի այլ տեղ, աւելի դէպի հարաւ, պաշտօն գտնել ձեզ համար:

Այնտեղ ես մի հին ծանօթ ունիմ: Վարժուհին կամեցաւ իւր շնորհակալութիւնը յատնել, բայց բժշկը ժամանակ չըտուեց, այլ արագ-արագ իջաւ սանդուղքներից և շտապով հեռացաւ:

Եւ իրաւ բժշկի տուած լոյսը՝ այդ դժոխքից ազատուելու, ամենալաւ դեղն եղաւ, որ թէպէտև վերջնականապէս չըժշկեց նրա հեւանդութիւնը, սակայն զուտով ոտի կանգնեցրեց նրան:

Անցան շատ շաբաթներ, բայց մի այլ տեղ վիխագրուելու մասին որևէ լուր չստացուեց. այն ինչ գիւղի ասէ-կօսէները էլլի բանի ընկանք: Խօսում էին՝ որպէս թէ տեսնող է եղել, որ մի գիշեր վարժուհու մօտ մարդ է ներս մտել լուսամտով: Յետոյ էլլ տեսել են նրան այնտեղից դուրս գնալիս: Իսկ թէ ով էր նա, տեսնողը չի կարողացել ճանաչել մթութեան պատճառով, բայց անկասկած է, որ վարժուհու սիրեկանը պիտի եղած լինի:

Այդ չար նպատակով հրապարակ նետուած լուրը՝ որի հեղինակն անկասկած թշուառական գանձապահն էր, շատ մայրերի ականջին հասնելով, նրանք իսպառ մերժեցին իրանց անմեղ երեխանց ուղարկել այդ տեսակ

անամօթի մօտ ուսանելու։ Այդ լրի պատճառով շատ հայրեր էլ դիմեցին տանուտէրին։

Ինչ ասել կ'ուզի որ տէր-տէրն ու գեղագործը՝ ներքին բաւականութիւնից իրանց ձեռքերն էին շփում և կրակի վրայ իւղ աւելացնում։ Բայց դրանք այդ էլ բաւական չհամարելով այնքան ստորացան, որ անմիջապէս գրաւոր ամբաստանութիւններ ուղարկեցին վերատես, չին և նահանգապետին։

Վերատեսուչն ու նահանգապետը՝ որ դեռ ևս դանդաղում էին վարժուհու խնդրի պատասխանները գրելու՝ նրա ոռնիկ չստանալու մասին, — հէնց որ գեղագործի ու հոգևոր անձի ամբաստանութիւններն ստացան, անմիջապէս կարգադրութիւն արին՝ «ամենախիստ քննութիւն կատարել և ստուգել վարժուհու արարմունքների և նրա բարքուվարքի մասին գրուածները»։

Բայց այդ միջոցներին վարժուհու շորերն այնպէս մաշուած էին, որ նա ամաչում էր կիւրակի օրերը գնալ եկեղեցի, ուր ամենքն էլ աշքերով ուտում էին նրան։ Այդ իրողութիւնը ևս մի լաւ առիթ եղաւ վարժուհուն մեղադրելու անտառածութեան մէջ։

Յրիորդին մեղադրում էին՝ որ նա սիրային լարաբերութիւններ ունի սրանքա հետ,

որ նա վերին աստիճանի արհամարհանքով է վերաբերում դէպի գիւղի պատուաւոր ընտանիքները. . . :

Նշանակած քննութիւնից այնպէս երևաց, որ իբրթէ վարժուհին չի կարողացել ուսումնարանը կառավարել որպէս հարկն է. բացի դրանից առանց քաշուելունա յաճախ է գնացել պանդոկ, ուր կանգ են առնում կառապաններ, ամեն գոյնի թափառաշրջիկներ ու ամեն տեսակ խառնիճաղանձ ամբոխ. իսկ որ ամենից վատն է համարեա միշտ էլ հիւանդ է եղել, հետևապէս անկարող անթերի կատարելու իւր ստանձնած պարտականութիւնները։

Տանուտէրի մտմտուքը միայն իւր խարխուլ տների վարձն ստանալը լինելով՝ հէնց ինչ թուզթ էլ որ բերում էին վարժուհու մասին գրած, առանց երկար ու բարակ բանի ետևից ընկնելու, իսկոյն ստորագրում և տանուտէրական կնիքը խփում էր. մինչև անգամ քննութեան արձանագրութեան տակ, ինքնարերաբար, աւելացրեց հետևեալը. «Ե՞ս՝ որպէս հասարակութեան ներկայացուցիչ, վըկայում եմ որ հեռացնելով վարժուհուն, որ վատ օրինակ կարող է լինել մեր երեխանց համար, իշխանութիւնը դրանով լի ու լի բաւականութիւն տուած կըլինի գիւղի ողջ հա-

սարակութեան օրինական ցանկութեան»:

Իսկ գանձապահը կամենալով ազատ մը-նալ որևէ պատասխանատութիւնից ու խայտառակուելուց, բարեհաճեց վերջապէս վճարել վարժուհու ռոճիկը, բայց միայն այն պայմանով՝ որ նա մաս առ մաս և յետին թուերով ստորագրէր ամսականների ստացումը: Այդքան բաներից յետու ի հարկէ որ՝ վարժուհու համար ողջ մէկ էր, թէ ինչպէս ստորագրէր:

Մէկ խօսքով՝ ամենքն էլ իրանց գործը կատարեցին: Իսկ փետրվար ամսին մի գեղեցիկ օր վարժուհին պաշտօնական թուղթ ստացաւ, որով յայտնում էին նրան, թէ «Մինչի տեղական ուսումնարանական խորհրդի առանձին կարգադրութիւնը՝ նոյն խորհրդի ընդունակութեամբ, առաջարկում է ձեզ անմիջապէս ընդհատել ձեր պարապմունքները դպրոցում, ևալին ևալին»:

Այդ թուղթն այնպէս վատ ազդեց խեղճ աղջկայվրայ, որ նրա աչքերն արտասուբով լըքցուեցին:

— Ինչո՞ւ, ի՞նչ բանի, իմ ո՞ր յանցանքիս, կամ ո՞ր պարտազանցութեանս համար. ես ի՞նչ եմ արել նրանց, — անդադար շշնջում էր

նա և նորից կարգում չարագուշակ թղթի տողերը: Այնտեղ գրուած էր նոյնպէս, թէ «ձեզ հեռացնում են, որովհետև դուք ձեզ պահել չէք իմացել, որ անփոյթ էք գտնուել ձեր ստանձնած պարտականութիւնները կատարելու մէջ և՝ որ ամենավատն է, դուք համակրող և թէ միաժամանակ քարոզող էք եղել այն վնասակար վարդապետութեան, որ միանգամայն հակառակ լինելով կրօնի սկզբունքներին՝ արհամարհում է այդ սկզբունքների վրայ հիմնուած բարոյական կանոնները»:

Արդեօք ինչի՞ մէջ է թերացել իւր պարտականութիւնները կատարելիս, և կամ այդ ի՞նչ վնասակար վարդապետութիւն է քարոզել ի՞նքը, որի մասին գրուած է. ինեղճ աղջիկը բան չէր հասկանում: Թէպէտև վարժուհուն իրաւունք էր տուած ներկայացնել իւր բացատրութիւններն ու իրան արդարացնող հանգամանքները, բայց նա ոյժ չէր ըգգում իւր մէջ այդ բանն անելու, քանի որ ի՞նքը որևէ բանում մեղաւոր չէր, հետեւապէս նա արդարանալու էլ հարկ չէր տեսնում: Նա մի-երկու անգամ էլի աչքի անցրեց թուղթը և ձգեց կրակն ու նորից ձեռք առաւ արդէն սկսած քաթանէ շապկի կարելը,

որի միջոցին էր վրայ հասել այդ սպառնական թուղթը:

Վարժուհին շարունակում էր իւր կարը և հետն էլ մտածում իւր ներկալ անմխիթար ու անորոշ ապագայի մասին. նա եկաւ այն եզրակացութեան, թէ այժմ իւր գլխաւոր մեղն այն է, որ ինքը մենակ է այս աշխարհիս երեսին և չունի մէկը, որ իւր պատուին պաշտպան հանդիսանալ: Իսկ թէ ուր պիտի գնար այդտեղից, նա ոչինչ չգիտէր, և այդ անորոշութիւնն աւելի էր տանջում նրան: Իսկ մի մօտիկ մարդ էլ չկար, որին բանար իւր սիրտը, որի խորհրդին դիմէր:

Բարեբաղդաբար այդ գէպքից յետոյ մի օր կըկին եկաւ ծերունի բժիշկը և յաւտնեց օրիորդին, թէ առաջիկայ մարտի սկզբներին վարժուհու տեղ է բացւում մի ծովեզերեալ փոքրիկ քաղաքում, ուր ապրում է իւր պահանձակուած աղջիկը:

— Այնտեղ ամեն բանով ձեզ համար լաւ կըլինի, — խօսքը շարունակեց բժիշկը. — միայն թէ զգուշացնում եմ ձեզ, որ այստեղ ոչ ոքի բան չասէք այդ մասին, ապա թէ ոչ ցած արարածներն իսկոյն ձեռք կ'առնեն իրանց ստոր ամբաստանութիւնները, — աւարտեց իւր խօսքը բժիշկը, բարեւ-մնաս ասաց և հեռացաւ:

Վարժուհին վճռեց հէնց միւս օրն իսկ հեռանալ այդ չարաբաղդ գիւղից, ուր կարձ միջոցում այնքան տանջուեց ինքը:

Օրիորդի հեռանալու լուրը երբ իմացաւ որդեկորոյս պանդոկապետուհին, իրան բոլորովին կորցրեց: Նա սկսեց սարսափելի անէծք թափել աշխարհիս վրայ եղած բոլոր անսլիտան ու վատ մարդկանց գլխին անխտիր. որովհետեւ եթէ չլինէին անպիտան մարդիկ, այն ժամանակ իւր «աղջիկ-ջան»-ն էլ ստիպուած չէր լինիլ թողնել իրան և հեռանալ:

Վարժուհին մեծ դժուարութեամբ կարողացաւ հանգստացնել զայրացած պառաւին. փարուեց զզովը, խնդրեց, աղաչեց, որ աւելորդ աղմուկի տեղիք չտայ: Վերջապէս երբ պառաւը բոլորովին հանդարտուեց, պայմանաւորուեցին որ առաւօտեան վաղվաղ ճանապարհ ընկնի օրիորդը նոյն գրաստավար Ուեկիամօցցայի ջորիով, որով միքանի ամիս առաջ ոտք էր դրել այդ գիւղը:

Միւս օրը տրեք գեռ չէր գուրս եկել, երբ վարժուհին, պանդոկապետուհին ու Զիկունանօն իւր հաւատարիմ շան հետ գուրս եկան գիւղից: Օրիորդի մեղքը գալիս էր նունօն, որ արդէն սովորել էր իրան: Խեղճ տըղան՝ որ վարժուհու նման բոլորովին մենակ էր

աշխարհիս երեսին, չէր թաքցնում իւր դառն վիշտը:

Սուաւօտեան սառն օդը մինչի մարդու ոսկորներն էր թափանցում և գողացնել տալիս: Ուեկիամօցցան աւելի վաղ էր դուրս եկել և սպասում էր նրանց բլրի գագաթին: Հասաւ հրաժեշտի րոպէն: Անմխիթար պառաւը գրկից բաց չէր թողնում օրիորդին, շարունակ համբուրում էր նրան և հետն էլ հեկեկում:

Չիկու-Նանօն երբ օրիորդի «չամադանը» իւր ձեռքով ամուր կապեց ջորու թարքին, նացնցոտիքի թեռվ ծածուկ սրբեց աչքից գլուրուող արտասուքը. սակայն երբ օրիորդը նրա ձեռն էլ առաւ և մնաս-բարով ասաց, դըժ. բաղդ տղան այլես իրան պահել չկարողանալով՝ փղձկաց և դառնագին լաց եղաւ: Նրա հաւատարիմ շունը ևս իւր կարգին սկսեց պոչը բուլդի-բուլդի անել, հոտոտալ վարժուհու փէշերը և զունջիկ-մըունջիկ գալ. նա էլ այդ ձեռվ էր իւր մնաս-բարովն ասում:

Զորեպանն առաջ գալով՝ խնդրեց օրիորդին հեծնել ջորին:

— Ո՛չ, ես մինչի բլրի ստորոտը ոտով կ'իջնեմ, ասաց օրիորդը և աշխուժութեամբ առաջ անցաւ:

Նայելով նրա ետևից, պառաւը նորից հեկեկաց.

— Ո՛խ, կարծես Մենիիս երկրորդ անգամ կորցը! . . . :

Վարժուհին առաջ էր գնում և հետզհետէ ընկղմում հովտից բարձրացող առաւօտեան շամանդաղի մէջ. իսկ քանիմի ըոպէից յետոյ բոլորովին անհետացաւ անմխիթար պառաւի և տխուրը նանոյի աչքերից:

Օրիորդին վիճակուած էր դեռ անցնելու կեանքի երկար և փշոտ ուղին, յորի թէպէտ յաճախ անժամանակ դէպի գերեզման է առաջնորդում, բայց որով գնալ նախապատիւ են համարում այն բոլոր առաքինի կանաք, որոնք ցանկանում են ազնիւ աշխատանքով ապրել և որոնց համար բարի անունը ամեն բանից թանգ է:



պար դառնույ ըմբած առ խոյս  
առ քաղաքի ավելի ուժակա առ մեր  
թշրիկ և հոգի զի ջառ ու անդրի և  
առան բարեգործ պատու համարեց առ  
անու միջնոց առ օքն առաջնունց առան  
առ բանահանու առան առ մասունց առան  
առ արդար առան առ առան  
առ առ առ առ առան առ առան  
առ առ առ առ առ առ առ առ առ առ



ՀՀ Ազգային գրադարան



NL0596477

